# ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 60 (24613), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودودوم - شماره (۲٤٦۱۳) ٦۰ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ԿԻՐԱԿԻ

17 ՄԱՐՏԻ 2024

یکشنبه – ۲۷ اسفند ۱۴۰۲

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir

آلیک

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی


# ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ ԱՐԺԱՆԱՑԵԼ Է ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՏԻՏՂՈՍԻ

*Սիրելի հայրենակիցներ, ուրախութեամբ տեղեկացնում ենք, որ սոյն թւականի մարտի 14-ին, Անթիլիասի Մայրավանքում տեղի ունեցած Ազգային Կեդրոնական վարչութեան Կրօնական ու Քաղաքական ժողովների խառն նիստի աւարտին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետը Արքութեան տիտղոս է շնորհել Սպահանի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Սիփան Ս. եպս. Քէչէճեանին եւ երեք այլ թեմերի առաջնորդների:*

*Վեհափառ Հայրապետը բարձր գնահատելով առաջնորդ սրբազանների նւիրեալ ծառայութիւնը՝ նրանց շնորհեց արքութեան տիտղոս՝ շեշտելով, որ յիշեալ պարգեւատրումը միայն գնահատանքի արտայայտութիւն չէ, այլեւ առաւել խթան վերանորոգ նւիրումով շարունակելու մեր ծառայութիւնը ժողովրդին:*





*Թեմիս Պատգամաւորական ժողովի, Թեմական եւ Կրօնական խորհուրդների, ենթամարմինների եւ համայնքի անունից շնորհաւորում ենք Գերշ. Տ. Սիփան Ս. արք. Քէչէճեանին՝ այս տիտղոսին արժանանալու առթիւ: Սրբազան Հօրը մաղթում ենք առողջութիւն եւ ուժ ու կորով՝ իրեն վստահւած հոգեւոր ծառայութեան եւ ազգանւէր գործունէութեան համար:*

**Դիւան Ս. Հ. Թ. ազգային առաջնորդարանի**

**«ԱԼԻՔ» օրաթերթի խմբագրութիւնը, տնօրինութիւնը ինչպէս նաեւ ողջ աշխատակազմը շնորհաւորում է Սպահանի հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Սիփան Ս. եպս. Քէչէճեանին՝ Արքութեան տիտղոսին արժանանալու առիթով, մաղթում նրան քաջ առողջութիւն, բեղուն եւ ժողովրդանւէր աշխատանքում, բազում ազգանւիրեալ կոչումներ:**

«…Դաշնակցութիւնը հպարտ էր իր Քրիստափորով: Չկայ մի դրւագ կուսակցութեան պատմութեան մէջ, չկայ մի բանավէճ ծրագրային կամ տակտիկի խնդիրների մասին, չկայ մի ձեռնարկ, գաղափարական մի կռիւ, ուր մասնակցած չլինի մեր վետերանը, ուր նա թողած չլինի իր բնորոշ կնիքը, ուր նա հարթած չլինի ճանապարհները:

Սակայն նա միայն կուսակցութեան մարդ չէր: Նա մարդ էր բառիս բովանդակ նշանակութեամբ: Նա խոր յարգանք էր վայելում Կովկասի ե՛ւ ռուս, ե՛ւ վրացի յեղափոխականների շրջաններում: Իսկ երէկ նրա դամբարանի մօտ ողբում էին նրան՝ մակեդոնական շարժման ամենաիռչակաւոր պարագլուխները: Ո՛չ, Քրիստափորը չէր պատկանում միմիայն Հայութեան…

Նա սոցիալիստ էր իր աշխարհայեցութեամբ, իր զգացումներով ու տեմպերամենտով, իր ամբողջ կեանքով, բայց նա եւ հայրենասէր էր բառիս ամենավեհ նշանակութեամբ: Նրա հեռաւոր իդէալն էր՝ սոցիալիստական կազմակերպութիւնը համայնական սկզբունքների, ազգերի եղբայրութեան խարիսխի վրայ: Նա մինչեւ անգամ ընդնշմարում էր ապագայի մառախուղի մէջ մի այնպիսի դրութիւն, ուր իսպառ ջնջւած կը լինեն ազգայնական առանձնայատկութիւններն ու խտրութիւնները, բայց նաեւ գիտէր միաժամանակ, որ իւրաքանչիւր մարդ-քաղաքացի պիտի աշխատէ իր հարազատ միջավայրում, պիտի ձգտէ իր սեփական ազգը բարձրացնելու…

Նրա սիրտը արիւնոտում էր ի տես մահաշունչ իրականութեան, ուր հայ ժողովուրդը ստիպւած է կռւել – եւ ո՛րպիսի անբաւ զոհողութիւններով – ոչ թէ քաղաքական ու սոցիալական ռեֆորմների համար, այլ ամենատարրական մարդկային իրաւունքները ձեռք բերելու համար եւ ամենասուրբը բոլոր իրաւունքներից – ապրելու իրաւունքը…

Նա գիտակցում էր պատմութեան չարաշուք տնօրինութիւնը, նա անխռով դիմաւորում էր հայութեան բաժին՝ սեւ, անօրինակ իրականութեան եւ շարունակ կոչ էր անում հայ ինտելիգենցիային, յորդորում էր նրան դաւաճանութեան սպառնալիքներով՝ կանգնած մնալ քաղաքացիական պարտքի բարձրութեան վրայ, ըմբռնել պահանջներից ամենաիրամայականը, խնամել վէրքերից ամենացաւոտը, չձգել մի ամբողջ արիւնլայ ժողովուրդ ի սաստ ճակատագրի:

Նա ինքը գնաց արեան ու զոհողութեան ճանապարհով, նա ինքը զահավէժ սլացաւ դէպի կեանքի յորձանուտ հոսանքը, ուսկից դարձ չկայ… եւ ընկաւ կէս-ճանապարհին, շանթահարւած անարգ պատահարից…

Ընկա՛ւ մեր հին առաջամարտիկը պարտաճանաչ զինւորի մահով, գործի, կռւի հնոցում, գլուխը հպարտ բարձրացրած, որպէս մի դարաւոր կաղնի, անակնկալ կայծակից խորտակւած… եւ այժմ նա հանգչում է այնտեղ, ուր միայն կարող է հանգչել անխոնջ, մոլեռանդ աշխատաւորը… »:

*Մարտի 17-ը՝ ՀՅԴ հիմնադիր երրորդութեան անդամ, Դաշնակցութեան գաղափարական հայրը համարւող Քրիստափոր Միքայէլեանի (1859 - 1905) յիշատակի օրն է:*

*Մէջբերումը՝ 1905 թւականի ապրիլին, Քրիստափորի եղեռնական նահատակութեանը նւիրւած «Դրօշակ»-ում հրապարակւած առաջնորդողից է:*

Իրանի պաշտպանութեան նախարար.

## «ԱՄՆ-ի եւ սիոնիստական ռեժիմի որեւէ ռազմավարական սխալ եւ արկածախնդրութիւն, տարածաշրջանում աւելի է սրելու իրավիճակը»

*«ԱԼԻՔ» - Սիրիայի Արաբական Հանրապետութեան պաշտպանութեան նախարարը, Թեհրանում, Պաշտպանութեան նախարարութեան յարկի տակ հանդիպում է ունեցել Իրանի Իսլամական Հանրապետութեան պաշտպանութեան նախարար գեներալ Աշթիանիի հետ:*

*«Միզան» լրատւական գործակալութեան համաձայն՝ գեներալ Աշթիանին անդրադառնալով Իրանի նախագահ պարոն Ռէյիսիի ժամանակին Սիրիա կատարած այցին, Սիրիայի վարչապետի Թեհրան կատարած այցին եւ տնտեսական համագործակցութիւնների գերագոյն յանձնախմբի 15-րդ նիստին, ասել է. «Տարածաշրջանային իրադարձութիւններից եւ երկու երկրների յարաբերութիւնների կարեւորութիւնից ելնելով անհրաժեշտ է երկու կողմերի յարատեւ խորհրդակցութիւնները»:*

*Գեներալ Աշթիանին նշելով, որ սիոնիստական ռեժիմը տարածաշրջանում լարւածութիւնը սաստկացնելով եւ հասարակական կարծիքը դէպի այս*

**(Շար. 8-րդ էջում)**



Աննա Մայիլեանը՝ «ԱԼԻՔ»-ի հետ զրոյցում.

## «Հայաստանի պետականութեան պահպանումը բոլորիս գերնպատակն է, եւ այսօր երաժշտական մշակոյթի նշանակութիւնը կրկնակի է շեշտադրւում»



*ՀՀ վաստակաւոր արտիստ, Երեւանի Կոմիտասի անւան պետական կոնսերւատորիայի պրոֆեսոր Աննա Մայիլեանը «ԱԼԻՔ»-ի հետ զրոյցում յորդորում է արտասահմանում ապրող հայութեանը միանալ առցանց ստորագրահաւաքին կոնսերւատորիայի հնարաւոր օպտիմալացման եւ ակադեմիական քաղաք տեղափոխելու ծրագրի առնչութեամբ:*

*Մեր զրուցակիցը ընդգծելով, իր դիրքորոշումը արւեստի ԲՈՒՀ-երի միաւորման եւ Երեւանի Կոմիտասի անւան պետական կոնսերւատորիան ապագայ ակադեմիական քաղաքի մաս դարձնելու, տեղափոխելու վերաբերեալ, շեշտեց, որ կոնսերւատորիայի ղեկավարութիւնը եւ ուսանողութիւնը, ինչպէս նաեւ դասախօսական կազմը ոտքի կանգնեցին լուրն իմանալուն պէս:*

*«Մենք անմիջապէս ոտքի կանգնեցինք եւ յստակ դիրքորոշում ներկայացրեցինք, որ դէմ ենք նման որոշմանը, որի համար նաեւ ստորագրահաւաք կազմակերպեցինք: Ստորագրահաւաքին կարող են մասնակցել ոչ միայն ուսանողները, դասախօսները, այլ նաեւ իւրաքանչիւր անհատ, ով մտահոգ է այս հարցի շուրջ»,- նշեց նա:*

*Կարեւորելով երաժշտական կրթութեան հարցը, Աննա Մայիլեանը նշեց, որ երաժշտական կրթութիւնը մշտապէս եղել է Հայաստանի պետական քաղաքականութեան առաջնահերթութիւնների*

**(Շար. 8-րդ էջում)**



*«Հասկանանք պատմական րոպէի ամբողջ կարեւորութիւնը, սեղմենք մեր շարքերը, յառենք մեր հայեացքները դէպի թշնամին եւ գոչենք նրա լպիրշ երեսին. «Հալածի՛ր, կախի՛ր, սպանի՛ր. մենք չենք խնդրում խնայել մեզ, բայց մենք էլ քեզ չենք խնայի: Մահու կռիւ ենք յայտարարել քեզ եւ պիտի շարունակենք: Դու հպարտ ես քո բիրտ ուժով, իսկ մենք անմահութեան կնիքը ունենք մեր սրտերում: Մենք ասում ենք. ընկի՛ր, դահիճ. բացւի՛ր, արշալո՛յս,- եւ դու կընկնես, կամ մենք կը կործենք աշխարհի երեսից»*

***Քրիստափոր Միքայէլեան***


ARAM®
coffee
ԱՐԱՄ
قهوه آرام սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee



Իշխան Սաղաթէլեան.

## «Մեր ամենակարեւոր ռեսուրսներից մէկը մեր Սփիւռքն է»

Մենք ունենք տասը միլիոն հայութիւն: Ունենք մեծ պոտենցիալ: Եթէ այս ռեսուրսը ամբողջապէս եւ ճիշտ օգտագործի՝ Հայաստանի զարգացման համար մենք ամբողջովին նոր հնարաւորութիւններ կունենանք:

Այս մարդիկ ամէն ինչ անում են Սփիւռքը Հայաստանից կտրելու համար: Այս մասին մարտի 16-ին արտաշատցիների հետ հանդիպմանը նշել է ՀՅԴ Հայաստանի ԳՄ ներկայացուցիչ, «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Իշխան Սաղաթէլեանը:

Նրա խօսքով՝ ՔՊ-ականները Սփիւռքում ապրողներին իրենց հայրենակիցը չեն համարում, ամէն ինչ անում են նրանց Հայաստանից հեռացնելու համար եւ այն էլ Թուրքիայի պահանջով:

Yerkir.am

Վարդան Օսկանեան.

## «Եւրոխորհրդարանի ընդունած բանաձեւում մի կէտ կայ միայն, որը ՀՀ ու Արցախի շահերից է բխում, մի խաբէք ժողովրդին»



Եւրոխորհրդարանի որոշման մէջ եթէ կայ մի կէտ, որը գործնական նշանակութիւն ունի մեզ համար, դա 14-րդ կէտն է, որը կոչ է անում Ադրբեջանին նստել բանակցութիւնների արցախահայութեան հետ, նրանց ղեկավարութեան հետ եւ միջազգային ներկայութեամբ եւ ապահովել նրանց վերադարձի խնդիրը իրենց տները, իրենց հողը: Այս մասին «Ֆէյսբուք»-եան իր էջում հրապարակուած տեսանիւթում ասել է ՀՀ նախկին արտգործնախարար, այժմ Արցախի հարցով յանձնախմբի անդամ Վարդան Օսկանեանը:

«Ուրեմն մենք սա արհամարհում ենք, մի կողմ ենք դրել, չենք խօսում այս մասին, ոնց որ դա գոյութիւն չունի եւ փորձում ենք այդ փաստաթուղթը թափահարել որպէս Հայաստանի ԵՄ-ին անդամակցութեան վկայական: Հերիք է խաբէք այս ժողովրդին, այս փաստաթղթում մի կէտ կայ, որը ՀՀ շահերից է բխում, դա 14-րդն է, բացէք կարդացէք: Չգիտեմ ՀՀ արտգործնախարարը կարդացել է այս փաստաթուղթը: Բայց ԱԺ-ում իրեն տրուած հարցերից կարծես թէ ինքը տեղեակ չի: Հասկանում եմ՝ մի բան էք որոշել դուք, բայց դա ձեր որոշումը չէ: Այսօր մի հատ շանս կայ արցախահայութեան իրենց տները վերադառնալու հարցը իրականութիւն դարձնել: Եթէ ՀՀ իշխանութիւնները մտափոխուեն, կամ նոր իշխանութիւններ լինեն, որոնք այս հարցը օրակարգ կը բերեն, հէնց Եւրոխորհրդարանի այդ դրոյթների հիման վրայ, մենք մի հատ շանս կունենանք ինչ-որ բան վերականգնել եւ, այո, միջազգային երաշխիքներով, ապահովել արցախցիների վերադարձը»,- ասել է նա:

Օսկանեանը նշել է, որ սա պատերազմ չի բերի, ընդհակառակը՝ կայուն խաղաղութիւն կը բերի Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ:

«Երբ որ արտգործնախարարը ասում է, որ Օսկանեանը փարիսեցիութիւն է անում, իսկապէ՞ս, կարդացե՞լ ես այդ փաստաթուղթը, ԵՄ-ն էլ է փարիսեցիութիւն անում: Վերցրու, կարդայ այդ փաստաթուղթը, յստակ ասում է, նկարագրում է ապագայ կարգավիճակը, կոչ է անում Ադրբեջանին նստել բանակցութիւնների միջազգային ներկայութեամբ: Այդ մարդիկ էլ ինչ անեն, եթէ մենք չենք ուզում մեր խնդիրները լուծել»,- յաւելել է նա՝ նշելով, որ այս առիթը չի կարելի բաց թողնել:



Վարդան Ոսկանեան.

## «Հայաստանի եւրաինտեգրման հեքիաթը շատ հզօր խայծ է»

Մեզանում տասնամեակներ շարունակ սպառողականութեան քարոզը բերել է նրան, որ արեւմտեան երկրների մուտքի արտօնագիրը սկսել է ընկալել ինչ-որ «դրախտի ուղեգիր», ինչի հետեւանքով աւելի շատ հայաստանցի է այցելել եւ էլ աւելի շատ երազում է այցելել պայմանական Փարիզ, քան, դիցուք, Վերին Ոսկեպար, որը մեր նախնեաց քաղաքակրթական հետքի եւ բնութեան առումով իրական դրախտի մի մասնիկ է: Այս մասին գրում է իրանագէտ Վարդան Ոսկանեանը:

«Հետեւաբար, Հայաստանի եւրաինտեգրման հեքիաթը շատ հզօր խայծ է՝ միտուած ազդելու պայմանական Փարիզ երազող միջին վիճակագրական հայաստանցու գիտակցութեան վրայ եւ ստիպելու նրան քամահրաբար եւ անփոյթ վերաբերւելու հէնց նրա իսկ անվտանգութիւնը եւ նաեւ զգացական ու պատմական կապն իր նախնիների հետ ապահովող «ինչ-որ կորած-մոլորած» պայմանական Վերին Ոսկեպարին, մինչդեռ իրականը հէնց վերջինն է, որը, ցաւօք, չենք դարձրել համազգային երազանք եւ պայքարի խթան»:

## Լոնդոնում մշակութային միջոցառումն Ադրբեջանն օգտագործել է՝ քաղաքական, հակահայկական քարոզչութիւն իրականացնելու նպատակով

«Մարտի 12-14-ին Միացեալ Թագաւորութեան մայրաքաղաքում կայացել է Լոնդոնի գրքի միջազգային փառատօնը, որին մասնակցում են բազմաթիւ երկրներ՝ ներկայացնելով իրենց հրատարակութիւնները: Գրքի փառատօնին մասնակցել է նաեւ Ադրբեջանը, որը ներկայացրել է շուրջ 300 գիրք:

Տաղաւարում փակցուած է մեծ քարտէզ՝ «Ղարաբաղն Ադրբեջան է» գրութեամբ: Մեծ քարտէզի կողքին պատկերուած են այլ քարտէզներ, որոնցում արտացոլուած են Ադրբեջանի տարածքային նկրտումները Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ:

Ցուցադրուած որոշ գրքեր հակահայկական քարոզչութեան եւ ատելութեան տարածման օրինակներ են: Մասնաւորապէս, ցուցահանդէսին ներկայացուել է «Հայկական ահաբեկչութիւն» վերնագրով գիրք»,- ասուած է յայտարարութեան մէջ:

Յայտարարութեան մէջ ընդգծուում է՝ այս օրինակները վկայում են, որ Ադրբեջանը մշակութային միջոցառումն օգտագործել է քաղաքական, հակահայկական քարոզչութիւն իրականացնելու նպատակով:

Լոնդոնի գրքի տօնավաճառի պաշտօնական կայքում նշուած է, որ տօնավաճառն այն վայրն է, որտեղ համաշխարհային հրատարակչական համայնքը միաւորւում է յարաբերութիւններ զարգացնելու եւ ստեղծագործական բովանդակութեան ապագան որոշելու համար:

«Տարակուսելի է եւ դատապարտելի է, որ մշակութային միջոցառման կազմակերպիչները հանդուրժում են այնպիսի բովանդակութեան ցուցադրութիւնը (ահաբեկչութիւն երեւոյթին վերագրւում է ազգային պատկանելութիւն), որը ռասիզմի, էթնիկ ատելութեան ակնյայտ դրսեւորում է»,- եզրափակւում է «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի յայտարարութիւնը:

Բէյրութի ամերիկեան համալսարանի պրոֆեսորի դիտարկումները.

## «Թեհրանի Երեւանին ուղղուած նախազգուշական ուղերձի միւս երեսը»


خاورمیانه پروند
صفحه نخست | درباره ما | عضویت | پیوند ها | تماس با ما | RSS
صفحه‌اصلی / اخبار / اخبار اصلی / آن سوی پیام هشدار تهران به ایروان
تدابیری که ایران برای قفقاز می اندیشد
آن سوی پیام هشدار تهران به ایروان
۲۶ اسفند ۱۴۰۲ | ۱۴:۰۰ کد : ۲۰۲۵۰۴۵ اخبار اصلی آسیا و آفریقا
تهران نگران است که دولت نیکول پاشینیان، نخست وزیر ارمنستان به دنبال بیرون راندن روسیه از منطقه و دعوت از غرب برای میانجیگری است. ایران هشدار می‌دهد که این امر آغاز یک جنگ منطقه‌ای جدید در مرز شمالی آن را باعث می‌شود و در نهایت راه را برای دخالت بیشتر ترکیه هموار می‌کند. در همین حال، وزیر دفاع ارمنستان بدون ارائه جزئیات بیشتر گفت که با طرف ایرانی «درباره تعداد زیادی از موضوعات مورد علاقه دوجانبه» به تفاهم رسیده است.

«ԱԼԻՔ» - Կովկասի հարցերով փորձագէտ Եղիա Թաշճեանը նոր մանրամասներ է հրապարակել ՀՀ պաշտպանութեան նախարարի թեհրանեան հանդիպումների մասին:

Թէեւ չկայ պաշտօնական հրապարակում հանդիպումներում տեղի ունեցած քննարկումների մասին, սակայն փորձագիտական շրջանակներին յայտնի է դարձել, որ ռազմական դաշինքի քննարկումների կողքին շօշափուել են Շանհային կամ BRICS+-ում Հայաստանի ներգրաւուածութեան հնարաւորութեան մասին հարցերը նաեւ:

Այս կապակցութեամբ Բէյրութի ամերիկեան համալսարանի պրոֆեսոր, Կովկասի հարցերով փորձագէտ Եղիա Թաշճեանը «Թեհրանի Երեւանին ուղղուած նախազգուշական ուղերձի միւս երեսը» խորագրով յօդուած է հրապարակել armenianweekly-ում, որտեղ լուսաբանելով իրավիճակի բարդութիւնը, փորձագէտը նկատել է տալիս լուսանցքում եղած որոշ խնդիրների մասին, որոնց մասին տեղեկատուութեան հոսքի պակասը խիստ զգալի է:

Այնուամենայնիւ ենթադրութիւններից խուսափելու միակ ելքը կողմերի դիւանագիտական հարթակներում կողմերի համար ստեղծուած հնարաւորութիւնների լուսաբանումն ու ընդգծումն է:

Փորձագէտն իր յօդուածում, որն ամբողջութեամբ վերահրապարակել է irdiplomacy-ին, նշել է, որ Թեհրանին անհանգստացնում է Հայաստանի վարչապետի կառավարութեան քայլերը՝ տարածաշրջանում Ռուսաստանի դերի նւազեցման կամ Կովկասից դուրս մղելու առումով եւ փոխարէնը Արեւմուտքի համար դերի բարձրացում ենթադրելը: «Իրանը նախազգուշացնում է, որ դա յանգեցնելու է նոր տարածաշրջանային պատերազմի Իրանի հիւսիսային սահմանին եւ ի վերջոյ ճանապարհ կը հարթի Թուրքիայի հետագայ ներգրաւուածութեան համար: Մինչդեռ Հայաստանի պաշտպանութեան նախարարը, առանց այլ մանրամասներ յայտնելու, ասել է, որ փոխըմբռնման է հասել իրանական կողմի հետ «փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող մեծ թւով հարցերի շուրջ»,- յաւելել է Թաշճեանը, գրում է irdiplomacy-ին:

Փորձագէտի կարծիքով Իրանն ունի ամէն ինչ խրախուսելու Հայաստանի պաշտօնեաներին, յատկապէս Հնդկաստանի հնարաւորութիւններով, որպէսզի Հայաստանին տրւի դիտորդի կարգավիճակ BRICS+-ում, կամ ՇՀԿ-ում (Հայաստանը դարձել է «երկխօսութեան գործընկեր» ՇՀԿ-ում 2016 թւականից)՝ Հայաստանը ինտեգրելու տարածաշրջանի ճարտարապետութեանը:

«Միանալով այս դաշինքներին՝ Հայաստանի աշխարհա-տնտեսական եւ աշխարհաքաղաքական նշանակութիւնը Եւրասիայում կաւելանայ, մինչդեռ այնպիսի խոշոր տէրութիւններ, ինչպիսիք են Չինաստանը եւ Հնդկաստանը, զարգացման եւ տնտեսական մեծ աճ արձանագրելով բարձրացնում են իրենց դերակատարութիւնը (համաշխարհային հարթակներում), ինչը դրդում է Ռուսաստանին դրականօրէն վերանայել իր յարաբերութիւնները Երեւանի հետ: Բացի այդ, Երեւանի ներկայիս իշխանութիւնները պէտք է համոզուած լինեն, որ Հայաստանին ձեռնտու է առայժմ մնալ Եւրասիական տնտեսական միութեան (ԵԱՏՄ) անդամ, քանի որ միութիւնը վերջերս ստորագրել է ազատ առեւտրի համաձայնագիր Իրանի հետ, եւ Հայաստանի տնտեսութիւնն է, որ առաջինը շահելու է դրանից»: Փորձագէտը յաւելել է, որ «միութեան» կողմից տրամադրւող խրախուսող դրոյթներն ուղղուած են Իրանին եւ Հնդկաստանին, ինչը Հայաստանի արժէքը Եւրասիայի անդամակցութեան հարցում աւելի ընդգծուած է դարձնում:

Փորձագէտը մանրամասնօրէն քննարկելով բոլոր հնարաւորութիւններն ու աշխարհագրական առաւելութիւնները յիշեցրել է նաեւ, որ Նիւ Դելհին պատրաստւում է այս տարի դառնալ դիտորդ պետութիւն եւ սկսել բանակցութիւններն ազատ առեւտրի գօտու շրջանակներում: «Միւս կողմից Երեւանը կարող է դառնալ բնական կամուրջ Եւրոմիութեան եւ Հնդկաստանի միջեւ նաեւ: Հետեւաբար, Հայաստանին առայժմ ձեռնտու է միանալ եւրասիական ինտեգրման մեծ նախագծերին, այլ ոչ թէ դառնալ եւրոպական «սահմանային մարտադաշտի գիծ» կամ կուախնձոր Արեւմուտքի ու Ռուսաստանի միջեւ»,- եզրակացրել է Բէյրութի ամերիկեան համալսարանի պրոֆեսորը:

# Տաւուշի շուրջ ընդդիմադիր եւ վարչապետ Փաշինեանի քաղաքական հաշւարկները. ինչ 3 տարբերակ էր առաջարկւում 2015 թ.










Նիկոլ Փաշինեանն այսօր լրագրողների հետ հանդիպմանը յայտարարել է, որ երբեք ոչ մի քննարկման ժամանակ խօսք չի եղել ու չի լինի Տաւուշի մարզի որեւէ գիւղ Ադրբեջանին յանձնելու մասին:

«ՀՀ տարածքում նման անուններով գիւղեր երբեք չեն եղել, որոնց անունները նշւում է ադրբեջանական մամուլում, ընդորում, ոչ միայն խորհրդային ժամանակներում, այլեւ դրանից յետոյ»,- ընդգծել է նա՝ յաւելելով, որ նախկին սահմանը, որ ԽՍՀՄ-ի ժամանակ գոյութիւն է ունեցել, այդ սահմանից այն, ինչ գտնւում է դէպի այն կողմ՝ Ադրբեջան է, ինչ գտնւում է այս կողմում՝ Հայաստան:

Ինչ-որ մէկը սա կը մեկնաբանի՞, որ Փաշինեանն ասում է՝ այն գիւղերը, որոնք համարում էք հայկական կամ Տաւուշի մարզինը, դա բոլորովին էլ այդպէս չէ՝ դրանք ադրբեջանական են: Բայց իրականում մենք Ադրբեջանին ենք յանձնելու ռազմավարական նշանակութեան ճանապարհներ, քանդւում է Տաւուշի մարզի ամուր պաշտպանական գիծը, կորցնում ենք ադրբեջանական դիրքերի նկատմամբ մեր այսօրւայ գերակայ դիրքերը:

Թէ ինչ ենք կորցնելու Տաւուշի մարզ ԽՍՀՄ քարտէզի հասնելուց՝ վտանգների մասին մենք զգուշացնում ենք առնւազն 3 տարի:

Մասնագէտների կարծիքով, եթէ ԽՍՀՄ քարտէզը «հասնի» Տաւուշի մարզ, մարտական դիրքեր ենք կորցնելու:

Օրինակ, յուլիսեան դէպքերից յայտնի «Անվախ» դիրքը կարող է դառնալ չէզոք գօտի, Շամշադինից, Նոյեմբերեանից դիրքեր կարող ենք կորցնել:

Տաւուշում ԽՍՀՄ քարտէզի կիրառման դէպքում Ոսկեպարի ճանապարհից, հնարաւոր է՝ մենք այլեւ չկարողանանք օգտւել, եւ Ադրբեջանն ամբողջ ճանապարհը վերցնի, քանի որ, ըստ ԽՍՀՄ քարտէզի՝ իրենց տարածքով է անցնում:

Այսինքն, այս դէպքում մենք կը կորցնենք Ոսկեպարի ճանապարհը, Ազատամուտի (Իջեւան-Բերդ), Կիրանցի եւ Ոսկեպարի հատւածները (Իջեւան-Նոյեմբերեան) եւ ոչ միայն:

Իսկ Նիկոլ Փաշինեանն ասուլիսի ժամանակ, բնականաբար, այս ամէնը նոյն գոյներով չի ներկայացրել, որ տեղի գիւղերը յայտնւելու են շրջափակման մէջ, եւ ոչ միայն:

«Օրինակ, Ոսկեպար գիւղի հատւածում ճանապարհի մի կտոր դէ իւրէ ՀՀ գիծը հատում է, նորից մըտնում է ՀՀ տարածք: Նախկինում քննարկումների այդպիսի ֆոն կար, որ կարող է այնտեղ ճանապարհ կայ, եւ այլն, այդ հարցը լուծենք հետեւեալ կերպ՝ այդ ճանապարհի հատւածը պահենք, ուրիշ տեղից համարժէք չափով տանք, եւ այլն: Բայց ես հիմա եկել եմ այն եզրակացութեան՝ պէտք չէ այդպէս վարւել, որովհետեւ դա ստեղծում է լրացուցիչ անորոշութիւն: Եւ պէտք է գնալ, մի քանի փոքր կտոր կայ. դո՞ւրս է գալիս այդ ճանապարհները դէ իւրէ հայկական սոցիալիստական հանրապետութիւնից, ոչինչ, մի քիչ կը վերակառուցենք այլ կերպ: Ես արդէն այդ յանձնարարականը տւել եմ, եւ առաջիկայում կը գնամ եւ մեր էս գիւղերի բնակիչներին կը բացատրեմ՝ ինչ եմ մտածում եւ ինչու եմ էդպէս մտածում»,- ասել է նա:

Այսինքն, Նիկոլ Փաշինեանը որոշել է արդէն՝ սահմանագծման եւ սահմանազատման գործընթացը սկըսւելու է Տաւուշի մարզից:

«Բանակցային գործընթացում երբեմն եղել է տպաւորութիւն, որ մենք կարող ենք որոշակի իրողութիւններ հաշւի առնելով՝ տարածքների որոշակի փոխանակումներ անել այն իմաստով, որ չնայած դէ իւրէ սահմանն այստեղ է, բայց դէ ֆակտօ իրողութիւնները նկատի ունենալով՝ ինչ-որ փոփոխութիւններ անենք: Նման հնարաւորութիւնները մեծ չեն ու կարող են դեֆորմացնել գործընթացը, լրացուցիչ ռիսկեր բերել,- մանրամասնել է Փաշինեանը՝ յաւելելով,- եթէ ՀՀ կոմունիկացիաները ձեռք բերւած պայմանաւորւածութիւնների հիման վրայ ունեցած սահմաններից դուրս են, ուրեմն դրանք պէտք է վերակառուցել, որպէսզի դրանք անցնեն ՀՀ դէ իւրէ տարածքով, որ այդ ոլորտում խնդիրներ չունենանք»:

Այստեղ, ըստ էութեան, Նիկոլ Փաշինեանը, որ ժամանակ առ ժամանակ խօսում է սահմանների ճշգրտման գործընթացի իրաւական հիմքերի մասին, ակամայ խոստովանում է, որ ամէն ինչ ոչ թէ որոշւում եւ որոշւելու է դէ իւրէ կամ ըստ իրաւունքի, այլ դէ ֆակտօ իրողութիւնների:

Իսկ այն, որ Նիկոլ Փաշինեանը պատրաստ է յանձնել Տաւուշի գիւղերը, նորութիւն չէ, այդ մասին նա պարզ տեքստով խօսել էր 2023 թւականի մայիսին Պրագայում «Ազատութիւն» ռադիոկայանին տւած հարցազըրոյցում, որին 168.am-ը մանրամասն անդրադարձել է, այդ թւում՝ պարզաբանելով այս տարածքից զօրքի յետքաշման առաջարկի վտանգները, որը Փաշինեանն արել էր:

«Մենք պատրաստ ենք: Բայց այստեղ ուրիշ հարց կայ. մենք ասում ենք՝ պիտի սահմանի հարց դրւի եւ դիտարկւի, իրենք ասում են՝ սահման չկայ, դելիմիտացւած սահման չկայ: Մենք ասում ենք՝ եթէ դելիմիտացւած սահման չկայ, դուք ո՞նց էք որոշում՝ մասը որ դնում էք քարտէզի վրայ, դա Ադրբեջանի տարածք է: Հիմա Ադրբեջանի զօրքը, ասենք, կանգնած է Պառաւաքարում իքս կէտի վրայ, մի ուրիշ տեղ էլ Հայաստանի զօրքն է կանգնած:

Մենք ասում ենք՝ պատրաստ ենք ամբողջ սահմանագիծն ընդունել 1975 թւականի քարտէզներով, բայց մեր դիրքորոշումն այն է, որ պէտք է իրաւական հիմքերը նայենք:

Հիմա ենթադրենք՝ Ադրբեջանի կամ Հայաստանի զօրքը կանգնած է այս գծի վրայ, եւ պէտք է այդ գծից յետ քաշւի, էդ սկզբունքօրէն համաձայն ենք, բայց պիտի յետ քաշւի, գնայ որտե՞ղ կանգնի, էդ կանգնելու տեղը, էդ գիծը ո՞նց է որոշւում:

Նշանակում է՝ այդտեղ կայ սահման, եթէ կայ սահման, ուրեմն եկէք վերցնենք էդ սահմանը, եւ ադրբեջանական զօրք սահմանի գծից էս կողմ պէտք է չլինի, հայկական զօրք սահմանի գծից էն կողմ չպէտք է լինի:

Շատ հնարաւոր է՝ ոչ թէ դա տեղի ունենայ, նոր ստորագրւի խաղաղութեան պայմանագիր, այլ պայմանագիրը ստորագրւի այն մասին, թէ դա ֆիզիկապէս ինչպէս եւ ինչ ժամկէտներում պէտք է տեղի ունենայ:

Մենք պատրաստ ենք՝ ոչ թէ իրենք յետ գնան, նոր ստորագրենք, այլ՝ ստորագրենք, նոր յետ գնան, մենք էլ, իրենք էլ, բայց դա պէտք է գրւի եւ ստորագրւի այնպէս, որ տարընթերցման տեղիք չտայ»,- ասել էր նա:

Հետաքրքիր է, որ ընդդիմադիր, այնուհետեւ իշխանութեան ղեկը նոր զաւթած Նիկոլ Փաշինեանը զգում էր այսօրւայ իր տրամաբանութեան վտանգները, ինչի մասին մենք ժամանակին գրել ենք:

Աւելին, 168.am-ը՝ «2016 թ. Փաշինեանին մտահոգում էր Տաւուշի անվըտանգութիւնը, 2020 թ. պլանները փոխւեցին. «Հայկական ժամանակի» յօդւածն ու գեներալի դէմ արշաւը» վերտառութեամբ յօդւածում ուշագըրաւ ակնարկներ էր արել նաեւ յուլիսեան մարտերի եւ Գրիգորի Խաչատուրովի հեղինակութեանը վնասելու համատեքստում, որը դուրս է մնացել ուշադրութիւնից:

Մենք յիշեցրել էինք Նիկոլ Փաշինեանի ընտանեկան թերթում 2016-ին տպագրւած՝ «Որդի Խաչատուրովի արկածները» վերտառութեամբ յօդւածը:

2016 թւականի յուլիսի 7-ին, նախագահ Սերժ Սարգսեանի հրամանագրով Գրիգորի Խաչատուրովը նշանակւել էր 3-րդ բանակային կորպուսի հրամանատար՝ կնքելով պայմանագիր հինգ տարի ժամկէտով:

Օրեր անց «Հայկական ժամանակը» վերոյիշեալ յօդւածում գրել էր. «Սերժ Սարգսեանը հինգշաբթի օրը ՀՀ ԶՈՒ գլխաւոր շտաբի պետ Իւրի Խաչատուրովի որդուն՝ գնդապետ Գրիգորի Խաչատուրովին, նշանակեց Պաշտպանութեան նախարարութեան երրորդ բանակային կորպուսի հրամանատար՝ կնքելով պայմանագիր հինգ տարի ժամկէտով: Ընդորում, նրան այդ պաշտօնին նշանակելու համար այնտեղից ազատեց գեներալ-մայոր Օնիկ Գասպարեանին՝ նշանակելով արդէն Իւրի Խաչատուրովի տեղակալ»:

Այսինքն, շեշտը դրել են ոչ թէ նրա վրայ, որ Սերժ Սարգսեանն Օնիկ Գասպարեանին նշանակել է ԳՇ պետի տեղակալ (2017-ին նա նշանակւեց ԳՇ պետի առաջին տեղակալ), այլ փորձել են ինտրիգ մտցնել՝ գեներալ Օնիկ Գասպարեանին ազատել են յանուն Իւրի Խաչատուրովի որդու՝ գնդապետ Գրիգորի Խաչատուրովի:

Այնուհետ Նիկոլ Փաշինեանի ընտանեկան թերթը եւ զրուցակից ազատամարտիկ Սուրէն Սարգսեանը, ըստ էութեան, կասկածի տակ էին դրել նրա մասնագիտական կարողութիւնները:

«Եւս մի կարեւոր հանգամանք. երրորդ բանակային կորպուսն իր մէջ ներառում է Տաւուշի մարզի ողջ զօրամիաւորումները: Իսկ Տաւուշը, ինչպէս գիտենք, պաշտպանական առումով բաւականին վտանգաւոր հատւած է: Ադրբեջանը հայկական սահմանները հէնց այդ հատւածից է պարբերաբար գնդակոծում եւ երբեմն մարդկային կորուստներ պատճառում: Հէնց երէկ ադրբեջանական զինուժը մօտ մէկ ժամ հրաձգային զէնքերից կրակ էր բացել Հայաստան-Վրաստան միջպետական աւտոճանապարհի մաս կազմող Ոսկեպար-Բաղանիս ճանապարհի վրայ»,- 2016 թւականի յուլիսեան այս յօդւածում գրել էր «Հայկական ժամանակի» յօդւածագիրը:

Իր հերթին՝ ազատամարտիկ Սուրէն Սարգսեանը լրացրել էր.

«Ես էլ եմ լսել Գրիգորի Խաչատուրովին առնչւող այդ պատմութիւնները: Եւ եթէ այդ տարածքում նա ինչ-որ պահի չկարողանայ արդարացնել իրեն, ապա ծանր արդիւնքներ կը բերի թէ՛ նշանակողի, թէ՛ բոլորիս համար: Նշանակելն իրենց գործն է, թող նշանակեն, բայց եթէ նա սխալւի, կունենանք լուրջ խնդիրներ: Բայց ես չեմ ցանկանում, որ իրենց այդ նշանակումների պատճառով մենք նորից անտեղի զոհեր ունենանք»:

Յուլիսեան մարտերից առաջ, դրա ընթացքում եւ յետոյ արդէն գեներալ Գրիգորի Խաչատուրովի մասնագիտական հզօր կարողութիւնների մէջ Նիկոլ Փաշինեանը եւ իր թիմը համոզւեցին՝ արձանագրելով դիրքային լրջագոյն յաջողութիւններ, եւ, որ Տաւուշի անվտանգութիւնը յուսալի ձեռքերում է, բայց արդէն վաղուց պլանները փոխւել էին:

Իսկ 2019-ի օգոստոսի 19-ին այսօր արդէն ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյեանը «Ֆէյսբուք»-եան իր էջում ոգեւորւած գրառումներ էր անում, նախ՝ «Հայաստան մտնող գազամուղի անվտանգութիւնն ապահովւած է, Չինարին էլ չի կարող գնդակոծւել», այնուհետեւ սա մի փոքր սըրբագրել էր՝ «Չինարիի հատւածում հակառակորդը կորցրել է երբեմնի բացարձակ դիրքային առաւելութիւնը»:

Իշխանական մամուլը եւս խըմբագրականներ էր գրել այս մասին:

«Ադրբեջանի սահմանապահ ծառայութիւնը, որը 2018 թ.-ի դեկտեմբերից ստանձնել է հայ-ադրբեջանական սահմանի Ղազախի եւ Աղըստաֆայի հատւածի (շրջանները սահմանակից են Տաւուշի մարզին) պահպանութիւնը, սահմանի տեւալ հատւածներում ակտիւօրէն նախաձեռնել էր ինժեներական եւ ամրաշինական աշխատանքներ: Միեւնոյն ժամանակ Ադրբեջանի սահմանապահ ծառայութիւնը փորձել է միջդիրքային տարածքում առաջանալ եւ նոր բնագիծ զբաղեցնել Պառաւաքարի բարձունքի շրջանում:

Տեւալ խնդրի իրականացման դէպքում հայկական մի շարք բնակավայրեր, Վրաստանից Հայաստան մտնող գազատար խողովակաշարը եւ Հայաստան-Վրաստան աւտոմայրուղու որոշ հատւածներ կը յայտնըւէին ադրբեջանական կողմի խոցման տիրոյթում: Սակայն հայկական կողմի գործողութիւնների արդիւնքում հակառակորդը ոչ միայն չի կարողացել իրականացնել իր առջեւ դրւած խնդիրը, այլեւ սահմանի որոշ հատւածներում կորցրել է անգամ տիրապետող դիրքերը: ՀՀ Զինւած ուժերը, մասնաւորապէս, բարելաւել են իրենց դիրքերը՝ արձանագրելով որոշակի առաջխաղացում եւ ամրապընդւելով Հայաստան-Ադրբեջան սահմանի երկայնքով:

Սահմանային գօտու արբանեակային լուսանկարների վերլուծութիւնը փաստում է, որ հայկական ուժերի լիարժէք վերահսկողութեան տակ են գտնւում մեր երկրի համար կարեւոր ռազմավարական նշանակութիւն ունեցող՝ Վրաստանից Հայաստան մտնող գազատար խողովակաշարը եւ Հայաստան-Վրաստան աւտոմայրուղին, ինչպէս նաեւ ադրբեջանական մի քանի գիւղական բնակավայրեր տանող ճանապարհները: Դիրքային նման առաջխաղացման շնորհիւ սահմանամերձ մի շարք հայկական բնակավայրերի անվտանգութեանը սպառնացող ռիսկերը նւազել են, այնուամենայնիւ, հաշւի առնելով տեղի լանդշաֆտի առանձնայատկութիւնները՝ բացարձակ անվտանգութեան մասին խօսել հնարաւոր չէ»,- մասնաւորապէս, գրել էր «Արմէնպրեսը»:

Յաւելենք, որ Տաւուշի մարզում՝ 3-րդ բանակային կորպուսի արդէն նախկին հրամանատար Գրիգորի Խաչատուրովի անմիջական ղեկավարութեամբ իրականացւած օպերացիայի արդիւնքում ունեցանք վերը նշւած իրավիճակը:

Նիկոլ Փաշինեանն այսօրւայ ասուլիսի ընթացքում, ինչպէս նշեցինք, Տաւուշի հետ կապւած այլ սկզբունքներ է նշել, ըստ որոնց՝ ԽՍՀՄ փլուզման պահին դէ իւրէ գոյութիւն ունեցած սահմանը, Ալմա Աթայի հռչակագրով, որը վերահաստատւել է Պրագայում, դարձել է միմեանց տարածքային ամբողջականութիւնը ճանաչելու հիմք:

Մինչդեռ 2015-2016 թւականներին Տաւուշի ճակատագրի եւ անվտանգութեան վերաբերեալ այլ տարբերակներ էին առաջ քաշւում: Մասնաւորապէս, 2015 թւականին «Հայկական ժամանակում» տպագրւած «Մարտական լուրեր Մովսէսից» վերնագրով յօդւածում անանուն յօդւածագիրն անդրադարձել էր Հայաստանի սահմանամերձ շրջաններին ու գրել, որ շարունակւում են պատերազմականին շատ մօտ լուրեր ստացւել. «Ի տարբերութիւն Ղարաբաղի շփման գծի, Տաւուշի մարզում քաղաքացիներն անմիջականօրէն զգում են ադրբեջանական զօրքերի ակտիւութիւնը: Խնդիրն այն է, որ Ղարաբաղ-Ադրբեջան շփման գծի մօտակայքում բնակավայրեր չկան, եւ Ղարաբաղում նրանք չեն կարողանում խոցել հայկական բնակավայրեր: Կարծում ենք նաեւ այս է պատճառը, որ ադրբեջանցիները ակտիւութիւն են ցուցաբերում Տաւուշի մարզում: Նրանց անհրաժեշտ է, որ պատերազմի շունչը զգայ քաղաքացիական բնակչութիւնը եւ ոչ միայն բանակը: Միեւնոյն ժամանակ, Տաւուշի մարզի սահմանապահ գիւղերի բնակիչները շատ տրամաբանական հարց են բարձրացնում. ինչքա՞ն կարող է այս ամէնը շարունակւել: Հասկանալի է, որ մարդիկ անդադար ստրես են տանում՝ մահւան անընդհատ սպառնալիքի տակ ապրելով: Մեր տեղեկատւութիւնը վկայում է, որ սահմանամերձ գիւղի բնակիչները այս խնդրի կոնկրետ լուծում են պահանջում»:

Այնուհետեւ հեղինակն ընթերցողին առաջարկել էր խնդրի լուծման իր տարբերակները.

«Եւ հարցը, ըստ էութեան, կարող է լուծւել երեք տարբերակով:

(Շար. 6-րդ էջում)

# ՍԿԱՌՈՒՏԻ ՍՊԻՏԱԿ ՍՈՒՏԻՑ՝ ԱՐԱԳՈՒԹԵԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ



Հատիս

***Վերջերս էր, երբ լրահոսում յայտնեց Հայաստանի եւ Իրանի միջեւ «Քարնէ»-ի գծով համաձայնագրի մասին լուրը: Լուրի մասին նշումը պայմանաւորուած է նրանով, որ համաձայնագրի կայացման աշխատանքների առանցքային դերում էր իրանահայ անւանի աւտոարշաւորդ, ռալի մրցումների բազմակի չեմպիոն Արամ Մարտիրոսեանը:***

***Արամը մասնագիտութեամբ ճարտարապետ է: Հ.Մ.Ը.Կ.-ի նախկին սկաուտ՝ նա դեռ մանկուց է երազել աւտոարշաւների մասին: Նրա ասութեամբ մէկ-մէկ սկաուտական աշխատանքները «պտտացնում էր» ու մարզաւան գնալու փոխարէն ոտքը թեքում էր դէպի Թեհրանի «Ազադի»-ի մրցուղի:***

***Մի անգամ պատահաբար, երբ հայրը մարզաւան է գնում նրան սկաուտական աշխատանքներից տուն բերելու, ջրի երես է դուրս գալիս Արամի բացակայութիւնների պատմութիւնը: Հայրը զարմացած կամ զայրացած հարցրել է ո՞ւր էիր: Բայց Արամի տուած պատասխանն աւելի է զարմացնում նրան: Արամը պատասխանել էր «պիստ»-ում էի: Հայրն էլ՝ բա ոչ ձիւն կայ ոչ էլ եղանակն է դահուկավազքային: Յետոյ, երբ լսում է, որ տղան աւտոարշաւի էր գնացել արդէն ինքն է դառնում քաջալերողն ու հովանաւորը՝ Իրանի աւտոարշաւի ապագայ չեմպիոնի:***

***Արամը հպարտօրէն պատմում է իր մրցաշարային ֆորմայի մասին, որը դիմացից Իրանի ու Հայաստանի ազգային դրօշներով վահանի պատկեր է յուշում: Նրա ասութեամբ սա եղբայրութեան խորհրդանիշ լինելուց բացի, յարգանքի դրսեւորում է մեր էութիւնը կազմող ինքնութեան նկատմամբ:***

***Արամը արագութեան ու էքստրիմի սիրահար է: Նոյն յաջողութեամբ էլ դահուկ է քշում:***

***Արամի հետ զրուցելիս անմիջապէս քեզ այնքան հարազատ ես զգում, որ ստիպւած մատդ նշան ես անում, որ հակառակ սովորութեան չանցնես «դու»-ի:***

***«...թող անցնի, ոչինչ, կարեւորը աւելի հանգիստ եմ պատասխանելու»,- ասում է Արամն ու անցնում ենք առաջ:***

## Միջազգային աւտոարշաւորդ Արամ Մարտիրոսեանի հետ՝ առանց ամրագոտիների

***Հարց- Մինչեւ դու-ի անցնելը տամ դուք-ովի վերջին, բայց երեւի շատ մարդկանց յուզող հարցերից մէկը: Քիչ չեն Հայաստան այցելող մարդիկ, ովքեր սեփական աւտոմեքենայով են ճամբորդում: Թղթաբանութիւններ, վճարումներ, յետոյ նորից մաքսատան թղթաբանութիւններ ու վճարումներ, ապա հայկական կողմում նոյն գործընթացը, որի օրինականութեան մասին միշտ մշուշային կասկածներ են լինում: Պատճառների վրայ չխորանանք: Ուղղակի հիմնական հարցը սա է, իրանական կողմում միջազգային վկայագիրն ու վճարումները, ինչու են կրկնւում հայկական կողմում, բա էլ ինչն էին միջազգային դարձնում:***

*Արամ Մարտիրոսեան- Ճիշտ այդպէս: Չնայած սովորութիւն կայ խընդիրը տեսնել դիմացի մայթում, ինչպէս մեր դէպքում: Բայց փաստ է, որ հայկական կողմը չի ունեցել նման փորձ՝ միջազգային տրանսպորտի հարցում: Բնական է յստակեցւած օրէնքի կէտ չունենալու դէպքում, փորձ է արւել սայլը տեղից շարժելու համար մի բան մշակելը: Ձեր ասած վճարումներն էլ նոյն տեսակից են: Մի անգամ շատ են գանձում, յաջորդ անգամ աւելի քիչ, դու էլ, նրանք էլ, չգիտեն ինչը ինչպէս: Մի մասը՝ շրջակայ միջավայրինն է, միւսը՝ ճանապարհային անվտանգութեան, եւ այլն... Իսկ, եթէ անկեղծ, ապա «Քարնէ»-ով այդ խնդիրը մշտապէս լուծւում է: Կողմերն ունեն համաձայնագիր, ինչպէս «ԱԼԻՔ»-ն էլ ժամանակին լրատուութիւն արեց այդ մասին, անդրադարձաւ ժամանակին:*

*Բայց «Քարնէ»-ով կարելի է մեքենայի հետ կապւած վճարումները անհամեմատ թեթեւացնել եւ այն տեսնել «մէկ պատուհան» ձեւաչափում: Այսինքն, իրանական կողմում ձեւակերպումներ անելիս մի անգամ վճարում ես ու մի քանի ամիս առանց մաքսատուրքերի սահմանից անցնելու հնարաւորութիւն ստանում: Հայկական կողմում էլ չեն լինելու նախկինի պէս անորոշութիւն, չնայած տրամաբանական է, եթէ բացառութեան կարգով շրջակայ միջավայրի համար լինեն վճարումներ: Իրանական կողմը պատրաստակամութիւն է յայտնել Հայաստանին հովանաւորել, որպէսզի առանց ձեւականութիւնների ու ժամանակի կորուստի, որպէս լիիրաւ կողմ անդամակցել «Քարնէ» միջազգային կազմակերպութեանը:*

***Հարց- Մտածեցի ժամանակն է ընդհատել, բայց նոր հարց ծագեց: Ե՞րբ են ուղեւորներն արժանանալու նման պատւի:***

*Արամ Մարտիրոսեան- Առայժմ կողմերի միջեւ փոխըմբռնման յուշագիր կայ միայն: Իսկ այդ յուշագիրը յուսով ենք պաշտօնական պայմանագրի տեսք ստանայ գարնանը, որով խորհրդանշանական մեկնարկը կը տրւի «Ընտանեկան ռալի»-ով, ինչին ընտանիքները կարող են մասնակցել սեփական մեքենաներով եւ ռալի ձեւաչափով աւտոարշաւի մասնակիցը լինել: Նախատեսւած է անցնել Միւնիքը եւ հասնել մարզկենտրոն՝ Կապան: Սա խորհրդանշական կը լինի երկու երկրների հազարամեայ սահմանը կարեւորելու առումով նաեւ:*

***Հարց- Անցնենք առաջ: Չնայած դժւար թէ ձեզանից առաջ անցնելը հեշտ լինէր: Ինչ աւտոմեքենայ էք վարել առաջին մրցոյթում:***

*Արամ- Երեւի վատ չէր լինի ասել, որ մրցաւտոներն ունեն յատուկ չափորոշիչներն ու դասակարգումները: Շարժիչի տարողութիւնն ու մեքենաների հզօրութեան յատկանիշերը եւ այլն: Եթէ շատ չխորանանք, ապա իմ առաջին աւտոմեքենան 1600 cc «Գոլֆ»-ն էր, ապա ձեռք բերեցի գերմանական «Շիրաքօ»-ն, որը շուտով արժանացաւ հանդիսատեսի համակրանքին ու տեսնելիս կոչում էին «շիրաֆքան» (առիւծասպան):*

***Հարց- Քանի՞ տարեկանում:***

*Արամ- 18-ս նոր էի բոլորել:*

***Հարց- ...տնեցիք ի՞նչ կարծիքի էին:***

*Արամ- Հայրս իմ ամենամեծ հովանաւորն էր:*

***Հարց- Ինչո՞վ էր տարբերւում քաղաքային երթեւեկից:***

*Արամ- Կատա՞կ էք անում: Քաղաքում մարդիկ աւելի արագ են վարում (ծիծաղում է):*

***Հարց- Մի քիչ հեռու կը գնամ մինչեւ հարցին վերադառնալը: Ժամանակին հարց էր ծագել մտքումս, որ շախմատն ինչ կապ ունի մարզանքի եւ առհասարակ ինչ մարզաձեւ է: Նոյնը կուզենայի հարցնել աւտոսպորտի մասին...***

*Արամ- Ես էլ գիտէի նախորդ հարցը կատակ է: Աւտոսպորտի մասին միայն այսքանը, որ չգիտեմ այնպիսի մարզաձեւ, որ 200-ից 300 հարիւր արագութեան տակ երկու ժամ գամւած աթոռին փորձես երբեմն մինչեւ 4G հասնող ճնշմանը դիմանալով կառավարել նման արագութեան տակ՝ 4-ից 5 տոննա կշռող հրէշին: Նման ձգողական ճնշումը հաւասար է ռազմօդանաւի օդաչուի զգացածին: Իւրաքանչիւր մրցաշար կարող է քեզանից խլել Դամաւանդ լեռան գագաթ բարձրանալու չափ կալորիա եւ ուժ: Մրցաշարերին անհրաժեշտ վարժութիւնը ոչնչով չի զիջում մարմնամարզութեան պարապմունքներին: Այնպիսի զգացմունք կայ, որ մեքենան ոնց որ վերջին ողովդ կառավարած լինես: Մարմնով մէկ հակադրւում ես ձգողականութեանը, ու նոյն այդ պայմաններում պէտք է ուղեղդ արնաքամ չլինի, թէկուզ մէկ վայրկեան: Մեղմ ասած կեանքի հարց է: Այլապէս դու էլ, մեքենադ էլ, թիմն էլ անդառնալի վնասներ էք կրելու:*

***Հարց- Միջազգային մրցոյթների մասին պատմէք:***

*Արամ- 2011-ին համաշխարհային մրցումներին մասնակցելու վկայագիր եմ ստացել: Մինչ այդ տարիներ էր, ինչ Իրանի մրցումների բացարձակ չեմպիոնն էի՝ ազատ ոճի դասակարգումով: Դա ինձ բերեց նաեւ միջազգային լիցենզաւորում: Իսկ միջազգային մրցումներում չեմ յիշում դէպք, որին մասնակցած չլինեմ Իրանի դրօշով: Զգեստիս մի կողմում Իրանի դրօշն է, իսկ միւս կողմը Հայաստանի Եռագոյնը: Նոյնիսկ ԱՄՆ-ում մասնակցածս մրցոյթում է նոյնը եղել: Տեղ կայ, որ կոպտել են դրա համար, բայց ես հպարտութեամբ եմ կրում իմ դրօշները:*

***Հարց- Միջազգային մրցոյթն ինչո՞վ էր տարբերւում իրանականից:***

*Արամ- Մարզաձեւն իր մրցաձեւերով շատ է բազմազան ու այդ մասին խօսելը կարող է մասնագիտական ձանձրոյթ հաղորդել: Բայց կը*

(Շար. 6-րդ էջում)






***Արամ Մարտիրոսեանի եւ F1-ի թեստ-դրայւէր Նիկոլաս Մինասեանի առաջին հանդիպման պահը***

*Լուսանկարները՝ Արամ Մարտիրոսեանի ֆէյսպուքեան էջից*

# Մի շարք ամերիկահայ մոռացուած գրողների մասին

ՌՈՒԲԻՆԱ ՕՀԱՆԵԱՆ

*Որպէս պատասխան մի հարցումի ասեմ, որ Մինաս Թէօլէօլեանի հեղինակած «Դար մը գրականութիւն» երկհատորը՝ գոնէ ամերիկահայ գրական դէմքերին ծանօթացնելու առումով, թերի է, շատ թերի է, ու, պարզ է, ես նկատի ունեմ այն տարիները, որ ուսումնասիրել է Թէօլէօլեանը:*

*«Դար մը գրականութիւնը» ամբողջ Հայկական Սփիւռքի գրական դէմքերի մասին համառօտ տեղեկութիւնների հաւաքածոյ է: Աշխատանքը լուրջ ուսումնասիրութեան արդիւնք է, բայց ինձ անյայտ պատճառներով ամերիկահայ շատ-շատ գրական դէմքերի անունները չկան այդտեղ, ուստի այս առումով «Դար մը գրականութիւնը» թերի է:*

*Ստորեւ բերում եմ ուրիշ գրական դէմքերի մասին տեղեկութիւններ (12 հոգի՝ 213-ից), որ կայ «ԱՄՆ-ում վախճանուած հայ գրական դէմքեր» իմ հատորում. ներառել եմ նաեւ Մինաս Թէօլէօլեանի վերաբերեալ տեղեկութիւնները:*

Ռ. Օ.

**Թէօլէօլեան Մինաս**



**(1913 թ., Խարբերդի Պարտիզակ գիւղ, Օսմանական կայսրութիւն – 1997 թ., Բոստոն, ԱՄՆ)**

Արձակագիր, բանաստեղծ, գրականագէտ, մանկավարժ, խմբագիր, հասարակական գործիչ: 1922 թ.-ին Իզմիրի ջարդերից յետոյ, գնում է Պոլիս: Աւարտել է Պոլսի Մխիթարեանների վարժարանը: 17 տարեկանում, իր ընկերոջ հետ սկսել է հրատարակել «Արձան» գեղարուեստական պարբերաթերթը: 1944 թ.-ին հաստատուել է Հալէպ, որտեղ խմբագրել է «Արեւելք» թերթը: 1956 թ.-ին քաղաքական պատճառներով արտաքսուել է Սիրիայից եւ մէկ տարով եղել է Կահիրէ, Եգիպտոս, ապա տեղափոխուել Բէյրութ: 1960 թ.-ին, որպէս դաշնակցական գործիչ գործուղուել է Բոստոն, ԱՄՆ ու եղել «Հայրենիք» թերթի խմբագրապետը: Աշխատակցել է սփիւռքահայ թերթերի:

Հրատարակած բանաստեղծութիւնների հատորներն են «Նախերգանք» եւ «Մթնոլորտ»-ը: Աշխատասիրել է նաեւ՝ «Վահան Թէքէեան» գրականագիտական վերլուծութիւնը, «Յեղին փառքը» թատերգը, «Քերականութիւն արեւմտահայ լեզւի» երկու հատորով, «Դար մը գրականութիւն» երկու հատորով, «Պայքարը Հ.Յ. Դաշնակցութեան դէմ», «Հայկական արտասահմանը եւ Ազգային Սահմանադրութիւնը»: Ունի անտիպ բազմաթիւ գործեր:

**Ահարոնեան Վարդգէս**



**(1888 թ., Իգդիր, Ռուսական Կայսրութիւն – 1965 թ., մայրաքաղաք Վաշինգտոն, ԱՄՆ)**

Գրող, իրաւաբան, հասարակական գործիչ եւ մանկավարժ: Գրող, քաղաքական գործիչ Աւետիս Ահարոնեանի որդին: 1912 թ.-ին աւարտել է Մոսկւայի համալսարանի Իրաւաբանական բաժինը: Եղել է Զօրավար Անդրանիկի ռուսերէնի թարգմանիչը: Իր կնոջ՝ Արմէնուհի Տիգրանեանի հետ հեղինակել է «Հրազդան» հայերէն դասագրքերը ԱՄՆ-ում: Աշխատակցել է ամերիկահայ մամուլին: Գրական անունը՝ Վ. Մենակ:

Հրատարակած գործերն են՝ «Յովհաննէս Թումանեան. մարդը եւ բանաստեղծը», «Րաֆֆի. կեանքը», «Անդրանիկ. մարդը եւ ռազմիկը», «Լեւոն Շանթ. մարդը եւ գործը»: Հրատարակել է իր հօր՝ Աւետիս Ահարոնեանի, գործերի 10 հատորը:

**Առլէն Մայքլ*)**
**(Գույումճեան Տիգրան. Michael Arlen)**



**(1895 թ., Ռուսէ, Բուլղարիա – 1956 թ., Նիւ Եօրք, ԱՄՆ)**

Գրող, արձակագիր, թատերագիր, ակնարկագիր: Բրիտանիայի Էդինբուրգի համալսարանում ուսանել է բժշկութիւն: Նրա գրական վարպետութիւնը բարձր են գնահատել ամերիկեան արձակի խոշոր դէմքերը: 1924 թ.-ին նրա հեղինակած «Կանաչ գլխարկ» վէպը նրան բերում է համաշխարհային ճանաչում: Վէպը էկրանաւորուել է երկու անգամ: Չառլի Չապլինը այն համարեց արտակարգ սիրոյ պատմութիւն: 1941 թ.-ին հաստատւում է ԱՄՆ: Գրել է անգլերէն:

Հրատարակած գործերից են՝ «The London Venture", "Piracy", "The Green Hat", "Young Men in Love", "Lily Christine", "Men Dislike Women", "Man's Mortality", "Hell! Said the Duchess" "The Flying Duchman". "The Romantic Lady", "These Charming People", "Ghost Stories", "Babies in the Wood", "The Crooked Coronet", "The Ancient Sin and Other Stories", "The Great Book of Mistry."

*) Մայքլ Առլէն հայր

**Բարջանճցի Ծերո**
**(Մահը՝ ԱՄՆ-ում)**

Գրող: 1938 թ.-ին, Բոստոնում հրատարակել է «Բարջան գիւղ. համայնապատում (1600-1937)» պատկերազարդ աշխատասիրութիւնը: Բարջանը հայկական գիւղ էր Խարբերդի շրջանում, Օսմանական կայսրութիւնում:

**Եղիկեան Գրիգոր**
**(Մահը՝ ԱՄՆ-ում)**

Թատերագիր: 1927 թ.-ին, Բոստոնում հրատարակել է «Նոր Մարգարէն» թատերգութիւնը, որ պատմական ողբերգութեան մասին է:

**Էկինեան Հայկակ**



**(1865 թ., Դիարբեքր, Օսմանական կայսրութիւն – 1919 թ., Ֆրեզնօ, ԱՄՆ)**

Բանաստեղծ, արձակագիր, խմբագիր, հրատարակիչ: 1883 թ.-ին հաստատուել է ԱՄՆ-ում: 1888 թ.-ին հրատարակել է ամերիկահայ առաջին պարբերականը «Արեգակ»-ը: Այնուհետ ԱՄՆ տարբեր քաղաքներում հիմնադրել է ու խմբագրել է հայերէն մի քանի թերթեր:

Հրատարակած գործերն են ԱՄՆ-ում առաջին հայերէն վէպը «Վահան Հայկանուշ» -ը, «Կսկծանք», «Քնար ժողովրդական» բանաստեղծութիւնների հատորները: Նաեւ հրատարակել է «Երգարան ազգային», «ժողովրդական երգարան» գրքերը:

**Թընկըրեան (Տէր-Մարգարեան) Սոնա**
**(1918 թ., Պոլիս, Օսմանական կայսրութիւն – 1986 թ., Նիւ Եօրք, ԱՄՆ)**

Արձակագիր, թատերագիր, մանկավարժ, հասարակական գործիչ: Նա եղել է Պոլսոյ Պետական երգչախմբի երկարամեայ անդամը: 1981 թ.-ին հաստատուել է ԱՄՆ, Նիւ Եօրքում, որտեղ շարունակել է աշխատակցել սփիւռքահայ մամուլին:

Հրատարակած գործերն են «Կեանքի մէջէն», «Կեանքի հետ» պատմուածքների ժողովածուները, «Տապալուած ծառը» պատմուածքը, «Մարուքեանները» վէպը եւ «Քարէ պուպրիկ» թատերգութիւնը: Պոլսահայ թերթերում հրատարակել է պատմուածքներ. որոշները ամփոփուել են «Սահանք» անունով երկհատորի մէջ:

**Կէօրկիզեան Նւարդ**
**(Թաւրիզ, Իրան - Մահը՝ Ֆրեզնոյում, ԱՄՆ)**

Բանաստեղծ, արձակագիր: Յօդուածներով աշխատակցել է ամերիկահայ մամուլին: 1950-ականներին ապրել է Ֆրեզնոյում:

1924 թ.-ին, Թաւրիզում հրատարակել է «Հայ կնոջ դերը պատմութեան մէջ» հատորը, որը լոյս է տեսել Ատրպատականի հայոց թեմի տպարանում, Իրան:

Հրատարակած գործերից են «Բաբախումներ», «Կարօտի երգեր»: «Սրտի ձայներ» բանաստեղծութիւնների, արձակ էջերի եւ յօդուածների հատորը լոյս է տեսել 1951 թ.-ին, Ֆրեզոնում:

**Մեսիայեան Երւանդ**



**(1882, Սեբաստիա, Օսմանական կայսրութիւն – 1956 թ., Նիւ Եօրք, ԱՄՆ)**

Գրող, թարգմանիչ, խմբագիր, հասարակական գործիչ: Աւարտել է Պոլիսի «Ռաբըրտ» կոլէջը: 1903 թ.-ին անցնում է Փարիզ եւ ֆրանսական գրական երկերից թարգմանութիւններ անում, աշխատակցում է հայ մամուլին: 1909 թ.-ին վերադառնում է Պոլիս եւ «Ռաբըրտ» կոլէջում ֆրանսերէն գրականութիւն դասաւանդում: 1914 թ.-ին հաստատւում է Բոստոն, ԱՄՆ, աշխատակցում է ամերիկահայ թերթերի ու դառնում մի քանի թերթի խմբագիր: Նա հասարակական մեծ աշխատանք է ծաւալում Միացեալ Նահանգների տարբեր քաղաքներում՝ թերթեր հիմնելով եւ ի նպաստ հայ գաղթականների եւ որբերի դրամահաւաքներ կազմակերպելով: Պատանի տարիքից գրական երկերով հանդէս է եկել հայ մամուլում:

Հրատարակած գործերն են «Ամսարը», «Վարվառէ», «Անատոլ Ֆրանս. Մարդն ու գործը», «Գրական դպրոցները Ֆրանսիայում» աշխատասիրութիւնները: Ֆրանսերէնից հայերէն է թարգմանել Անատոլ Ֆրանսի վէպերը:

**Սէքլէմեան (Սեքլեմեան) Աբրահամ**



**(1864 թ., Մուսայ Լեռան Պիթիաս գիւղ – 1920 թ., հաւանաբար Ֆրեզնօ, ԱՄՆ)**

Գրող, բանաստեղծ, հրապարակագիր, խմբագիր: Նախնական ուսումն ստացել է ծննդավայրի դպրոցում: Սովորել է Իզմիրի ամերիկեան կոլէջում: Հայրը զոհուել է Համիդեան ջարդերի ժամանակ, որից յետոյ մայրն ու քոյրը տեղափոխւում են ԱՄՆ, Ֆրեզնօ: Երիտասարդ տարիքում անդամակցել է ՀՅԴ-ին: Ուսուցիչ է եղել Կարինում, ուր ձերբակալուել է որպէս յեղափոխական գործիչ: Բանտից ազատուելուց յետոյ անցել է Պոլիս, որտեղ հրատարակել է իր երկու հատորները: 1898 թ.-ին հաստատուել է Ֆրեզնօ: Գրել է նաեւ անգլերէն:

1908 թ.-ին, ուրիշ դաշնակցականների հետ միասին Ֆրեզնոյում հիմնադրել է «Ասպարէզ» թերթը: Աբրահամ Սէքլէմեանը «Ասպարէզ» թերթի առաջին խմբագիրն էր:

Հրատարակած գործերից են «Մարդ ըլլալու միջոցը» եւ «Ճշմարիտ կինը» հեքիաթների հատորը: Անգլերէնով հրատարակել է «Կոլտըն Մէյտըն» հատորը: Նրա բանաստեղծութիւններն ու արձակ ուրիշ էջերը տպագրուել են ամերիկահայ մամուլում:

**Փառլաքեան Նշան**
**(Nishan Parlakian)**



**(1925 թ., Նիւ Եօրք, ԱՄՆ – 2011 թ., Նիւ Եօրք)**

Թատերագիր, թատերական գործիչ, թարգմանիչ: Համալսարանական երկու վկայականներն ու դոկտորականը ստացել է Նիւ Եօրքի Կոլումբիա համալսարանից: Թատրոնի դասախօս էր Նիւ Եօրքի «Ջոն Ջէյ» կոլէջում: Նիւ Եօրքի ազգային առաջնորդարանին կից հայկական թատերախմբի բեմադրիչն էր: Անգլերէն է թարգմանել մի շարք թատերգութիւններ. Շիրւանզադէի «Պատւի համար» եւ «Չարի ոգին», Զաբէլ Ասատուրի «Հարսը», Արամ Աշոտ Պապայեանի «Թաքսի Թաքսի»-ն եւ այլն: Կազմել ու Երեւանում հրատարակել է իր հօր՝ Ռաֆայէլ (Փայէ) Փառլաքեանի*), բանաստեղծութիւնները՝ «Երկիր, երկինք եւ խորհուրդ» անունով: Գրել է անգլերէն:

(Շար. 6-րդ էջում)

# Որպէս թոռնիկ՝ ես քեզ կասեմ...

ՔՐԻՍՏԻՆԷ ԳՈԼԲՈՒԴԱՂԵԱՆ



Թափուր տեղ է այս աթոռը: Քշում եմ աթոռը տնով մէկ՝ պատուհանի տակ, դրան մօտ, ծաղկամանների, բազկաթոռների մօտ, բայց միեւնոյնն է, այս աթոռը չո՛ւնի տեղ. ասես գտել ու բերել եմ տո՛ւն, ու նա օտարականի պէս է պահում իրեն:

Ժամանակին ճօճւում էր այս աթոռն՝ իր կողքի ճօճող փայտէ ձիու պէս: Ես՝ ճօճող ձի՛ու վրայ, եւ դու՝ ճօճող աթո՛ռի. ես ու դու՝ ճօճւում ու ինչ որ հանրայայտ մրցութեան էինք մասնակցում, ես՝ քեզ ասում էի վստահաբար որ իմը՝ ձի է, իսկ քոնը՝ աթոռ. «Դու ո՞նց ես յաղթելու»: Դէպի պատուհան եմ գնում. պատուհանը դէմն էր, նայում, նայում էր, թէ քեզ ոնց տարան: Լուռ էր նայում, ա՛նշշուկ: Չգիտես ինչի, փոքրիկի պէս վազեցի ես էլ նայեմ այդ ամէնն ինչ որ նայում էր նաեւ՝ պատուհանը, ասես ինչ որ բան էին գաղում ինձնից, իսկ այդ քչփչոցը այնքան աղմկոտ էր, բայց միեւնոյն ժամանակ՝ նոյնքան անհասկանալի, իսկ ես մտովի՝ ձի էի վարում, սլանում էի երկնքով մէկ՝ քեզ հետ. չէ՛ դու նորից ձիու վրայ չէիր՝ աթոռդ թեւեր ունէր ինչպէս՝ ձին, չէր խանգարում ո՛չինչ, չէր կանչում ոչ ոք, չէր յօշոտում՝ մա՛հը: Ես էի եւ դո՛ւ՝ ընդամէնը: Յետոյ ընկայ, թւաց աթոռդ են տանում. ես քո լռութիւնից ապշած՝ խենթի պէս փաթաթուեցի աթոռիդ. ճօճւեց. ձի՛ու պէս ճօճւեց, իսկ ձիու փայտէ ոտքերը, թւաց թէ՝ կոտրըւեցին, թէկուզ գամուած էր կիսակըլոր փայտերի վրայ, որոնք հնարաւորութիւն էին տալիս նրան՝ ճօճւելու: Ճօճող աթոռը կամաց-կամաց կանգ առաւ: Իսկ ես խենթի պէս հարւածեցի աթոռիդ որ չքնի, ճօճւի, ճօճւի, որ ճօճւի՛... Իմ հարւածից երեք չորս անգամ ճօճւեց ու կանգ առաւ: Մտածում էի եթէ ճօճւի՝ կը բացես աչքերդ: Թւում էր՝ իսկ գոնէ հիմա ձին կը ճօճւի, կը սլանայ ու սեւ շարքի վրայով կը թռչի, եւ այս անգամ՝ ես քեզ ձիու վրայ նստեցրած կը տանեմ այս ամենից հեռու, կը հեռանանք այս անհաւատալի ողբից, որ այս ժխորին վէրջ կը դնի, բայց նա տեղից չշարժւեց, փէտացել էր. սեւ աչքերը չէին փայլում, եւ առաջին անգամ որքա՛ն անճաշակ թւացին նրա անփայլ, իսկ այսքան ժամանակ՝ ի՛նչ գեղեցիկ թւացող աչքերը... Յետոյ յանկարծ ձին իր մէջ ուժ գտնելով եկաւ ու ես ինձ գտայ ձիու վրայ, երբ միասին գնացել էինք կոխի տալու՝ հեռացող աթոռին, որ յետ վերադարձնէինք... Թւում էր տանում էին աթոռդ.. Ես վախեցած էի քո լռութիւնից... Կանչեցի՝ «Մեծ մա՛մ...», «Մեծ մա՛մ...» ու յիշեցի, որ ասում էիր՝ «Հա ջա՛ն»...

**«Առ քո թեւերին, տար ինձ,**
**ժամանակ,**
**Ես ետ մնալուց**
**շատ եմ վախենում:**
**Յուշերից որքան**
**հեռու եմ կենում,**
**Մէկ է, կապում են թեւերս**
**նրանք»*):**

Որպէս թոռնիկ՝ ես քեզ կասեմ՝ «Շնորհակալ եմ քե՛զ, շնորհակալ եմ, որ հէնց դու էիր իմ մեծ մամը, շնորհակալ եմ իւրաքանչիւր վայրկեանների համար, որ ես ապրեցի ու կիսւեցի քեզ հետ, որ քեզ հետ՝ ես գիտակցեցի մեծաւորի դիրքն ու փառքը... Շնորհակալ եմ քեզ՝ ի՛մ մեծ մամ...»:

**07.03.2024 թ.,**
**Թեհրան**

--------------------

*) Համօ Սահեան. «Տար ինձ ժամանակ»:

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՓԱՍՏԵՐ



Nature.

# «Ճիշտ սնուելը, քունը եւ սոցիալական ակտիւութիւնը իջեցնում են դեպրեսիայի վտանգը»

Քեմբրիջի համալսարանի գիտնականները պատմել են, որ ոգելիցի չափաւոր օգտագործումը, առողջ քունը եւ սնունդը, ինչպէս նաեւ ֆիզիկական եւ սոցիալական ակտիւութիւնը կարող են դեպրեսիայի կանխարգելիչներ լինել: Հետազօտութեան արդիւնքները հրապարակուել են Nature ամսագրում:

Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութեան տուեալների համաձայն՝ իւրաքանչիւր քսաներորդ չափահաս մարդը տառապում է դեպրեսիայով: Այս հոգեկան խանգարումը արտայայտւում է տրամադրութեան կայուն անկմամբ եւ մտածողութեան խանգարումներով:

Մօտ 290 հազար մարդկանց տուեալների, որոնք վերցուել են Մեծ Բրիտանիայի Բիոբանկից, ուսումնասիրութիւնից յետոյ գիտնականներն առանձնացրել են դեպրեսիա ունեցող 13 հազար կամաւորների: Նրանց բոլորին հետեւել են ինը տարի՝ վարքի եւ կենսակերպի առանձնայատկութիւնները (դեպրեսիայով եւ առանց դրա) պարզելու համար:

Պարզուել է, որ որակեալ քունը իջեցնում է դեպրեսիայի առաջացման հաւանականութիւնը 22 տոկոսով: Շփումը եւ ակտիւ սոցիալական կեանքը կրճատում է այդ խանգարման հաւանականութիւնը 18 տոկոսով, ալկոհոլի չափաւոր օգտագործումը՝ 11, ճիշտ սնունդը՝ 6, կանոնաւոր ֆիզիկական ակտիւութիւնը՝ 14, ծխելուց հրաժարուելը՝ 20, իսկ ակտիւ կենսակերպը՝ 13 տոկոսով:

Գիտնականները նաեւ նշել են, որ այս առողջ սովորութիւնների ամբողջութիւնը դրական ազդեցութիւն է թողնում գենետիկ պատճառներով դեպրեսիայի հակում ունեցող մարդկանց կեանքի վրայ:

Հետազօտութեան հեղինակներն աւելացրել են, որ սովորաբար մարդիկ առողջ կենսակերպն ասոցիացնում են ֆիզիկական առողջութեան հետ: Բայց տագնապի, դեպրեսիայի, սթրեսի կանխման եւ հոգեկան հաւասարակշռութեան պահպանման համար առողջ սովորութիւնները նոյնպէս շատ կարեւոր են:

## ՍԿԱՌՈՒՏԻ...

(Շար. 4-րդ էջից)

պատմեմ այն մրցոյթի մասին, որը տեւում է 24 ժամ, իսկ դու՝ մասնակցում ես չորս միւս վարորդների հետ միասին նոյն թիմով: Իւրաքանչիւրիդ բաժին է ընկնում չորս ու կէս ժամը մէկ՝ մէկ ու կէս ժամ մեքենան վարելու հերթափոխ: Պիտի յաղթահարէի 90 այլ մեքենաների հետ մրցոյթը:

***Հարց- Տպաւորութիւն կայ, որ նախքան պատմելը պէտք է մեր ամրագօտիները ամրացնենք:***

Արամ- (ծիծաղում է) երեւի, քանի որ հէնց նոր էինք սկսել, երբ ծանր վթարով դուրս եկանք վազքուղուց: Մեքենաս արագ տեղափոխեցինք գարաժ ու սկսեց առանց հանգստանալու առիթի իմ չարքաշ փորձութիւնը: Չորս ժամից արդէն մեքենայում նստած պատրաստ էի մրցոյթի: Նոր էի փիստ մտել, երբ նկատեցի, որ խմելու ջրի հետ խնդիրներ կան: Վթարի բերումով սարքը պոկուել էր ու առաջիկայ մէկ ու կէս ժամը պէտք էր դիմանալ առանց ջրի: Նման դէպքերում պէտք է վստահել փորձառութեանդ: Նոյնիսկ, եթէ չես զգում, որ ծարաւ ես, դարձեալ պէտք է հաշուարկուած կումերով մարմնիդ ջուր հասցնես: Ամէն մի ծանր պտոյտից յետոյ մի քանի անգամ խորը շնչում ու արտաշնչում էի, որ թթուածին հասցնեմ գլխիս: Այլապէս ինքդ էլ չես հասկանայ, երբ ես ուշագնաց եղել: Կէսգիշերային հերթափոխն էր բաժին հասել ինձ: Ջրի խնդրի հետ կապս էլ կենտրոնի հետ կորաւ: Այլեւս կապի դուրս գալու հնարաւորութիւն չկար: Մտածեցի ամէն գնով պէտք է տակից դուրս գանք: Միակ իրանցին էի: Դա մի տեսակ պարտքի զգացում է արթնացնում մէջդ: Անասելի արագութիւն էի պահում: Ռեկորդը պահելու համար շարունակեցի ռէյսը: Այնքան էի տարուել մրցոյթով ու կենտրոնացած շնչառութեան վրայ էի աշխատում, որ մէկ ու կէս ժամի փոխարէն երկու ժամ էի վարել...

***Հարց- Մի տեսակ սպառողական վիճակ է: Երբ կանգնեցրիք մեքենան...***

Արամ- Հէնց նման առիթների ու դէպքերի համար էլ քեզ պէտք է նախքան մեքենան կանգնեցնելը տեղեկացնել բոքսի դերում եղած համադրողին: Իսկ, երբ ռադիոկապ չկայ՝ չես կարող վստահ լինել, որ կանգնելու դէպքում միւս վարորդը ժամանակին է փիստ դուրս գալու թէ ոչ, որ ժամանակի կորուստ չլինի: Դրսում էլ թիմն էր մտածում, որ լաւ էլ գնում է ու պէտք չէ կանգնեցնել... Իսկ վառելիքն ստիպեց կանգնել... Թիմում էլ նման հաշուարկները կատարւում են ժամացոյցի ճշգրտութեամբ: Այնպէս, որ ռադիոկապի բացակայութեան պայմաններում մեզնից երկուսն էլ գիտէր, որ որն է լինելու իմ վերջին շուրջը...

***Հարց- Պատմէք այս ասպարէզի հայ անուններ մասին...***

Արամ- Ինձ համար շարունակում է աւտոսպորտի լեգենդների ցուցակում իր տեղն զբաղեցնել Նիկոլաս Մինասեանը: Ինքը Ֆրանսիայից է: Հէնց վերը պատմածս մրցոյթի ժամանակ մօտեցայ ու անգլերէնով ասացի, որ Արամ Մարտիրոսեան է անունս: Ուրախութիւնից գրկախառնուեց ու ասած, որ անունս տեսել էր ցուցանակի վրայ ու ուզեցել է անպայման հանդիպել: Երկար ժամանակ բարձրաձայն ծիծաղում էինք: Ես հպարտութիւն էի ապրում, ինքը չգիտեմ, երեւի նոյնը: Ու այդպէ՛ս մեր այդ ծանօթութիւնը դարձաւ շարունակւող բարեկամութիւն: Երազում ենք մի առիթով հայկական թիմով հանդէս գալ որեւէ մրցոյթում: Հայերը մի քանիսն են այս ասպարէզում՝ Արթուր Գորոյեանը՝ Լիբանանից, ԱՄՆ-ից, եւ այլն... Կարծում եմ այդ օրը շուտով կը գայ:

***Հարց- Հայաստանի մրցոյթներին մասնակցած կա՞ք:***

Արամ- Այո, շատ: Մի անգամ Իրանի «Դրագ»-ի թիմն եմ ուղեկցել Հայաստան: Մեքենան տեղից պոկելու արագութեան մրցաձեւ է այն: Սահմանին մեզ անհասկանալի պատճառներով երկար պահեցին ու ուշացանք մրցոյթից: Զանգեցի Երեւան ու ֆեդերացիային յայտնեցի ծագած խնդրի մասին: Ասացին, որ մրցոյթն աւարտուած է ու դժւար է նորից կազմակերպելը: Բայց Իրանի թիմի պատւին մէկ շաբաթ անց կազմակերպուեց երկրորդ մրցոյթը, որը շատ արժեքաւոր էր իրանցի վարորդների համար: Այդ նոյն փոխադարձ վստահութեան լոյսի ներքոյ էր, որ հնարաւոր եղաւ այսօր մտածել երկու երկրների միջեւ յուշագրի մասին: «Քարնէ»-ի մասին է խօսքը:

***Հարց- Համարեա բոլոր վարորդների եւ գուցէ ոչ վարորդների իմացած աստղերից մէկի՝ Միխայիլ Շումախերի մասին եմ ուզում հարց տալ: Ի՞նչ է կամ ո՞վ է Շումախերը ձեզ համար:***

Արամ- Արդէն ասացիք ինչ որ պէտք է: Նման անունների քիչ ես հանդիպում: Մարդ, ով բոլորին է ծանօթ, նոյնիսկ, եթէ մարդիկ հետաքրքրուած չեն այդ մարզաձեւով: Նրա ընտանիքը դէպքից յետոյ խիստ դէմ է եղել ներքին խոհանոցային հարցերը հանրային դարձնելուն եւ ինչ խօսք, յաջողուել է անել դա: Միք Շումախերը Միխայիլ Շումախերի տղան է: Այժմ ուշադրութիւնը մասամբ նրա վրայ է նաեւ: Ինքը եւս F1-ում հանդէս գալու անցեալ ունի: Այս տարի թէսթ-դրայւեր էր բայց: Ինչքան գիտեմ Միխայիլ Շումախերին յաջողուել է քոմայից դուրս գալ: Հակասական տեղեկատւութիւն կայ այն մասին, որ յիշողութիւնն էլ է վերականգնել...ուրախ եմ, որ 2003-ին բախտն ունեցայ դիտել Բահրէյնում կայացած F1-ի մրցումը, Միխայիլ Շումախերի յաղթանակով իհարկէ:

***Հարց- Ինչպէ՞ս է ճշտորոշւում վարորդների տարեկան վարկանիշը:***

Արամ- Մրցակիցների վարկանշային աղիւսակը հաշուարկւում է մրցոյթներից հաւաքած միաւորներիով: Որպէս օրինակ F1-ում առաջին տեղին է յատկացւում 16 միաւոր, երկրորդին՝ 12, եւ այպէս շարունակ իւրաքանչիւր մրցաշար ունենում է իր դասակարգմանը յատուկ վարկանշային միաւորներ: Տարւայ ընթացքում քեզ բաժին ընկած «ռանք»-աւորումը կազմւած է այդ միաւորների գումարումից:



Արամ Մարտիրոսեանի Գոլֆ-Շիրաքօն

## Մի...

(Շար.5-րդ էջից)

Հրատարակած գործերն է «Grandma, Pray for Me», «Notable Women in Modern Armenian Drama: An Anthology», «Contemporary Armenian American Drama. An Anthology of Ancestral Voices», ամերիկահայ ժամանակակից թատերագիրների ստեղծագործութիւններից մի ծաղկաքաղ, «An Anthology. Edited by Nishan Parlakian and S. Peter Cow», եօթ թատերգութիւններ հայ դասական թատերագիրներից:

*) Ռաֆայէլ (Փայէլ) Փառլաքեանի մասին տեղեկութիւնները պակսում են: Ծնուել է Սեբաստիայի Հողդար քաղաքում, Օսմանական կայսրութիւնում: Փայէլի գրական ունակութիւնը օրին բարձր է գնահատել Դանիէլ Վարուժանը:

**Օսկանեան Խաչատուր**
**(Khachig Oskanian)**
**(1818 թ., Պոլիս, Օսմանական կայսրութիւն – 1900 թ.,**
**Նիւ Եօրք, ԱՄՆ)**

Գրող, լրագրող, գրադարանավար, հիւպատոս: Մասնաւոր ուսուցիչների մօտ տարբեր լեզուներ է սովորել: 1834 թ.-ին, ամերիկացի քարոզիչների օժանդակութեամբ հաստատուել է Նիւ Եօրք, ԱՄՆ: Նա առաջին հայն է Նիւ Եօրքում: Իրաւաբանութիւն է ուսանել Նիւ Եօրքի համալսարանում ու վերադարձել Պոլիս, որտեղ հայերէն հրատարակել է «Ազդարար բիւզանդական» պարբերականը: 1854 թ.-ին վերջնականապէս հաստատուել է Նիւ Եօրք: Օսքան Քրիստափոր գրական անունով արեւելքի մասին յօդուածներով եւ գրական նիւթերով աշխատակցել է «Նիւ Եօրք Հերալդ» եւ ամերիկեան այլ պարբերականներին: Գրել է անգլերէն:

1857 թ.-ին Նիւ Եօրքում հրատարակել է «Սուլթանը եւ իր ժողովուրդը» գիրքն Օսմանական կայսրութեան մասին: Գիրքն ունի նաեւ գեղարուեստական նշանակութիւն:

Խաչատուր Օսկանեանը եղել է Կոլումբիա համալսարանի Իրաւաբանական բաժնի գրադարանավարը, Նիւ Եօրքի մամուլի նախագահը, Նիւ Եօրքում Օսմանական հիւպատոս եւ մաքսատան պաշտօնեայ:

## Տաւուշի...

(Շար. 3-րդ էջից)

Տարբերակ 1– Հայկական Զինուած ուժերը ոչնչացնում են Մովսէս-Այգեպար-Ներքին Կարմիրաղբիւր-Չինարի հատուածում գտնուող ադրբեջանական դիրքերը: Նման իրական հնարաւորութիւն կայ, որովհետեւ մեր բազմաթիւ դիրքեր այս հատուածում գերիշխող են ադրբեջանականների նկատմամբ, եւ մեր բանակն ունի դիրքային էական առաւելութիւն:

Տարբերակ 2- Կայուն խաղաղութիւն է ձեռք բերւում բանակցութիւնների ընթացքում: Ի դէպ, ՀՀ ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդեանը այսօր մեկնում է Գերմանիա, որտեղ, ըստ ամենայնի, հանդիպումներ կունենայ ԵԱՀԿ ՄԽ համանախագահների հետ:

Տարբերակ 3- Կրակոցների, յարձակումների երկարատեւ շարքի հետեւանքով սահմանապահ գիւղերը կամաց-կամաց կը դատարկուեն, որովհետեւ մարդիկ իսկապէս չեն կարող ապրել դեշեկայի կրակահերթերի տակ:

Պրոցեսները ցոյց են տալիս, որ մեծ հաշւով՝ Հայաստանը պէտք է ընտրի այս երեք տարբերակներից մէկը: Լաւագոյնը, իհարկէ, երկրորդ տարբերակն է: Բայց Ադրբեջանի գործողութիւնները կասկածի տակ են դնում դրա ռէալութիւնը: Երրորդ տարբերակը Հայաստանի համար անընդունելի է ուղղակի: Եւ պրոցեսների այսպիսի շարունակութեան դէպքում կարծես թէ առաջին տարբերակին այլընտրանք չի լինելու: Տեղի զինուորականները մեր թղթակիցների հետ շփումների ընթացքում ասում են, որ այս հատուածի ադրբեջանական դիրքերը գրաւելը իրատեսական է ռազմական առումով: Իսկ թէ նման գործողութիւնը ի՞նչ ռազմաքաղաքական եւ աշխարհաքաղաքական հետեւանքներ կառաջացնի՝ դա արդէն քաղաքական հաշուարկի հարց է»:

Նիկոլ Փաշինեանի այսօրւայ խաղաղութեան օրակարգը, գուցէ ընդդիմադիր Նիկոլ Փաշինեանի կայուն խաղաղութեան ձգտման համատեքստում յանգեցնելու է վերեւում նըշւած 3-րդ տարբերակին, որովհետեւ Տաւուշում զիջումների ճանապարհով կորցնելու ենք մեր անվտանգային դիմադրողականութիւնը նաեւ այս հատւածում:

Ի դէպ, դեռ երկու տարի առաջ 168.am-ը գրել էր, որ ադրբեջանական կողմը մի քանի նոր ճանապարհ է պատրաստւում կառուցել դէպի Ջողազի ջրամբար կամ Բերքաբերի ուղղութեամբ, աւելին՝ Բերքաբերի «բերանով»:

Աւելի կոնկրետ՝ ճանապարհ է փորւել ոչ միայն Ղըզըլհաջըլի (ադրբ.՝ Qızılhacılı) գիւղի հատուածում, որը հարաւ-արեւմուտքում սահմանակից է Հայաստանի Բերքաբեր գիւղին, արեւմուտքում՝ Բերքաբերի ջրամբարին, այլեւ առաջ են եկել դէպի ջրամբար ու փորել, քանդել նաեւ մեր տարածքում՝ սահմանից ներս:

Ընդդիմադիր եւ վարչապետ Նիկոլ Փաշինեանի Տաւուշի հետ կապւած եղած եւ փոփոխւած պլանները գալիս են ապացուցելու, որ 2020 թւականի յուլիսեան մարտերի հետ կապւած, մեղմ ասած, Նիկոլ Փաշինեանը տարբեր յետին մտքեր է ունեցել՝ դա կարող էր վերաբերել անձամբ Գրիգորի Խաչատուրովին, 2018-ի իշխանափոխութիւնից յետոյ Նիկոլ Փաշինեանը Իւրի Խաչատուրովի որդուց միանգամից չազատուեց, որովհետեւ, թերեւս, յետին նպատակներ կային: Փաշինեանին գուցէ թւում էր, որ Գրիգորի Խաչատուրովը կարող է չյաղթահարել յուլիսեան սադրանքը, որը, ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարեանի կարծիքով, հրահրել էր Փաշինեանի իշխանութիւնը:

Այս մարտերն իրենց դերակատարումն ունեցան 2020 թւականի պատերազմի լինելու համատեքստում, ինչն արդէն Փաշինեանն էր ընդունել: Չմոռանանք նաեւ Թուրքիային ուղղւած այն մեսիջը, երբ պարգեւատրումը տեղի ունեցաւ Սարդարապատում՝ 44-օրեայից մէկ ամիս առաջ եւ առանց ՀՀ նախագահի:

Ինչեւէ, այսօր Նիկոլ Փաշինեանը ոչնչացնելով այդ մարտերի արդիւնքները, ըստ էութեան, ուժը կորցրած է ճանաչում յուլիսեան յաղթանակների համատեքստում բաժանած մեդալները՝ 16 զինծառայողի՝ «Մարտական խաչ» առաջին աստիճանի եւ 55 զինծառայողի՝ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշան, ինչպէս նաեւ՝ կապիտան Ռուբէն Սանամեանին Ազգային հերոսի կոչում էր շնորհւել:

Աւելին, Նիկոլ Փաշինեանը վաղուց ուժը կորցրած է ճանաչել Զինուած ուժերի սահմանադրական պարտականութիւնները, որի հետ զինւորականութիւնը համակերպւել է: Բանակը պարտւել է Նիկոլ Փաշինեանին եւ զիջել անվտանգութեան երաշխաւորի իր լեգիտիմ առաքելութիւնը: Եւ այնպէս չէ, որ սա 2020 թւականի 44-օրեայ պատերազմի արդիւնքում եղաւ, այս ծրագիրն աւելի վաղ էր մշակւել, առաջիկայում կը խօսենք հայ զինուորականի կերպարի ռեւոլիւցիայի մասին:

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՇԻՐԻՄԻՆ

Խոր վշտով համակւած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝



**ՎԻԳԷՆ ԲԵՀՐՈՒԶԻԻ**

ցաւալի մահը, որը պատահեց մարտի 2-ին, Ամերիկայում:

Հանգուցեալի մահուան առթիւ, հինգշաբթի, մարտի 21-ին, այցելութիւն կը տրուի հանգուցեալի հօր շիրիմին եւ կը կատարուի՝

**ԱՅԳՈՒՑԻ**

արարողութիւն:

Ցանկացողներից խնդրում ենք նոյն օրը՝ առ. ժամը 9:30-ին ներկայ գտնուել ներքոյիշեալ հասցէին՝ գերեզմանատուն մեկնելու համար:

**ՀԱՍՑԷ՝**

Հարաւային Մաջիդիէ, Հարաւային 20-մետրանոց պող., համար 107:

Ցաւակցութիւնները՝ գերեզմանատանը եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցուն կից «Եարիջանեան» սրահում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Ժերմէն Հաթումեան՝ այրին:

Աւօ եւ Սեդա Բեհրուզիներ՝ եղբայրը եւ իր կինը՝ ընտանեօք:

Անահիտ եւ Արմենակ Շահբազեաններ՝ քոյրը եւ իր ամուսինը՝ ընտանեօք:

Կարինէ եւ Յովիկ Աբեղեաններ՝ քոյրը եւ իր ամուսինը՝ ընտանեօք:

## ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

Ջերմօրէն շնորհաւորում ենք

**Արա Շահվերդեանին՝**

**Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ նստաշրջանի ընտրութիւններում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան կողմից պատգամաւոր ընտրուելու առթիւ:**



Մաղթում ենք առաւել յաջողութիւններ:

**ԵԱՐԻՋԱՆԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ**

## ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

تاق مشترک بازرگانی ایران و ارمنستان
ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԱՌԵՒՏՐԻ ՊԱԼԱՏ
IRAN - ARMENIA CHAMBER OF COMMERCE

Ջերմօրէն շնորհաւորում ենք

**Արա Շահվերդեանին՝**

**Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ նստաշրջանի ընտրութիւններում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան կողմից պատգամաւոր ընտրուելու առթիւ:**



Մաղթում ենք առաւել յաջողութիւններ:

**ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԱՌԵՒՏՐԻ ՊԱԼԱՏ**

## ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

تاق مشترک بازرگانی ایران و ارمنستان
ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԱՌԵՒՏՐԻ ՊԱԼԱՏ
IRAN - ARMENIA CHAMBER OF COMMERCE

Ջերմօրէն շնորհաւորում ենք

**Գեղարդ Մանսուրեանին՝**

**Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ նստաշրջանի ընտրութիւններում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան կողմից պատգամաւոր ընտրուելու առթիւ:**



Մաղթում ենք առաւել յաջողութիւններ:

**ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԱՌԵՒՏՐԻ ՊԱԼԱՏ**


**ԱԼԻՔ** Օրաթերթ

Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

**ALIK** ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994

E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir



**ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ**
**ԼՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՒԱՑՈՂ**
**ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ՝**
**ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ**
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան




## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Խոր վշտով համակւած յայտնում ենք, որ մեր շատ սիրելի եւ թանկագին՝



**ՀԱՅԿ ԳՈՒԼԱԶԻԶԵԱՆԻ**

ցաւալի մահուան առաջին տարելիցի առթիւ ուրբաթ, մարտի 22-ին, Ս. Սարգիս եկեղեցում, ս. պատարագից յետոյ կը կատարուի՝

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ**

Ցաւակցութիւնները՝ եկեղեցում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Սոֆիկ, Քառլին, Փաթրիկ եւ Նաթալի Նեժադեաններ՝ դուստրը եւ փեսան՝ ընտանեօք:

Յովիկ, Սկառլետ, Փրենի եւ Արէն Գուլազիզեաններ՝ որդին եւ հարսը՝ ընտանեօք:

Նորիկ եւ Ծովիկ Տէր-Պետրոսեաններ՝ աներորդին եւ իր կինը՝ ընտանեօք:

Ազնիւ Տէր-Պետրոսեան՝ քենին՝ ընտանեօք:

Նորա Շահվերդեան՝ խնամին:

Աբրահամեան, Թաթարօ, Ազիզեան, Բաբաջանեան, Քեշիշեան, Իւհաննա, Յովսէփեան եւ Աւագեան ընտանիքներ՝ հարազատները:

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

**«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը**

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանօք)՝ հետեւեալ հասցէով.

**Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16**
**Հեռ.՝ 88761154**

**«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ**


سفر دوستان قرن
SAFAR DOUSTAN GHARN
TOUR & TRAVEL AGENCY
Safar Doustan Gharn Tour & Travel Co. Ltd
هواپیمایی قشم QeshmAir
نمایندگی رسمی هواپیمایی قشم ایر

شرکت خدمات مسافرتی و جهانگردی سفردوستان قرن
Թռիչքներ է իրականացնում
**երկուշաբթի եւ հինգշաբթի օրերը,**
նաեւ յաւելեալ թռիչքներ
**մարտի 23-ին, 27-ին եւ 31-ին** (۴ – ۸ – ۱۲ فروردین)
դէպի Հայաստան եւ վերադարձ
**ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ**
تهران، خیابان شهید بهشتی، بین بزرگراه مدرس و قائم مقام، پلاک ۲۷۱، طبقه همکف
WWW.SAFARDOUSTAN.COM
۸۸۵۱۴۰۵۰





**ԱԼԻՔ-ի Internet-ային էջն է՝ www.alikonline.ir**




## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորազգաց ցաւակցութիւններն ենք յայտնում՝ Քրիստինէ Պօղոսեանին (Ստեփանեան), Արսինէ եւ Արմոնդ Կիրակոսեաններին, Ադրինէ եւ Վարուժ Մինասեաններին, Անգինէ եւ Անդրէ Մարկոսեաններին, Պօղոսեան եւ Ստեփանեան ընտանիքներին ու միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

**ՀԱՅՐԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ**

ցաւալի մահուան առթիւ:

**ԷԴՒԱՐԴ (ՄԱՍԻՍ), ԱՐԱՔՍ ԵՒ ՌԱԶՄԻԿ ՏԷՐ-ՄԱՄԲՐԷԵԱՆՆԵՐ**

## ՆՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Հանգուցեալի յիշատակին 10.000.000 ռիալ նուիրում է «Ալիք» օրաթերթին:

## «Հայաստանի....

(Շար. 1-ին էջից)

*շարքում, եւ կարեւորել է, որպէս ազգային ինքնութեան հիմնական սիւներից մէկը: Այս պատմական պահին, երբ Հայաստանի պետականութեան պահպանումը բոլորիս գերնպատակն է, երաժշտական մշակոյթի նշանակութիւնը կրկնակի է շեշտադրւում:*

*Երեւանի Կոմիտասի անուան պետական կոնսերւատորիայի պրոֆեսորը շեշտեց՝ ուրբաթ օրը այդ որոշման դէմ ստորագրահաւաքի վերջնաժամկէտն էր, սակայն հաշւի առնելով մեր արտասահմանում եղած բարեկամների հետաքրքրութիւնը եւ ոչ այնքան պատշաճ տեղեակ լինելու հանգամանքը որոշւեց երկարացնել մինչեւ մարտի 25-ը այնպէս, որ օնլայն հարթակում հնարաւոր է դեռ մասնակցել այդ ստորագրահաւաքին:*

*Մեր զրուցակիցը շեշտեց, որ ուսանողութիւնը եւ դասախօսական կազմը շատ վճռական են իրենց դիրքորոշման մէջ եւ թոյլ չեն տայ, որ Հայաստանի Հանրապետութեան երաժշտական մայր ԲՈՒՀ-ը, որը կրում է Կոմիտասի անւանումը, որտեղ կրթութիւն ստացած երաժիշտները բազմիցս են զարդարել աշխարհահռչակ բեմերը եւ Սփիւռքի տարբեր համայնքներում ներկայացրել են հայկական մշակոյթը՝ օպտիմալացւի:*

*Նա հռետորական հարց ուղղեց թէ՝ ինչպէ՞ս են պատկերացնում մէկ երաժշտական ֆակուլտետ, եւ նման բան չի կարող լինի, որովհետեւ կոնսերւատորիան լինելով քաղաքի կենտրոնում ունենալով շատ կարեւոր դերակատարութիւն, ոչ միայն մշակութային, այլ ուղղակի իր աւանդոյթներով յայտնի է ամբողջ աշխարհում:*

*«Որոշումը դեռ չի կայացւել դեռ քննարկումների փուլում է, բայց մենք զգօն ենք, որովհետեւ ոչ մի բան այլեւս հաւատ չի ներշնչում եւ չպէտք է ձեռքներս ծալած նստենք եւ գործ չանենք»,- նշեց նա:*

*Ինչպէս արտասահմանից կարող են միանալ ստորագրահաւաքին Աննա Մայիլեանը պատասխանեց, որ կոնսերւատորիայի էջում առկայ է ստորագրահաւաքի յղումը եւ անհրաժեշտ է հնարաւորինս տարածել, որպէսզի մարդկանց հնարաւոր դառնայ իրենց ձայնը լսելի դարձնել:*

*Ինչպէս էք պատկերացնում կոնսերւատորիայի ապագայ գործունէութիւնը, արդեօք հնարաւո՞ր է արդիականացման անհրաժեշտութիւնից ելնելով է խնդիր առաջացել, Մայիլեանը նշեց, որ որոշման մէջ տրամաբանութիւն բացարձակ գոյութիւն չունի, անտրամաբանական է նման որոշումը բացարձակ սխալ է:*

*«Մենք հիմա չպէտք է զբաղւէինք նման հարցի քննարկումներով, կամ աւելի շատ կարեւոր հարցեր պէտք է քննարկէինք, օրինակ մեր երկրի պաշտպանութեան եւ պետականութեան պահպանման հարցը»,- նշեց նա:*

*Իսկ ինչ վերաբերւում է կոնսերւատորիայի արդիականացման, զարգացմանը, ապա, Մայիլեանը նշեց, որ կոնսերւատորիան ինչպէս ակտիւ եղել է, այնպէս ակտիւ կայ, իր ուսանողական մթնոլորտով, հետաքրքիր գաղափարներով արտասահմանի հետ կապերի առումով եւս: Ըստ նրա՝ այն անվերջանալի պրոցես է եւ կարիք ունի միշտ զարգանալու, բայց այդ գործընթացը երբեք չի դադարել:*

*«Կը ցանկանայի նաեւ այդ գումարները որոնք ցանկանում են ծախսել այդ ակադեմիական քաղաքի վրայ, ծախսէին կոնսերւատորիայի վերանորոգման ուղղութեամբ»,- նշեց նա՝ յաւելելով, որ վերանորոգման ծրագիրը եւս կարծես թէ առկայ է:*

*«Ես ցանկանում եմ հաւատալ, որ դա իրօք այդպէս է եւ ամէն դէպքում ղեկավարութիւնը մեզ հաւաստիացնում է, որ դա այդպէս է եւ լինելու է նաեւ վերանորոգում, յուսամ, որ վերանորոգումը կը շարունակւի եւ մենք կունենանք վերանորոգւած կոնսերւատորիա եւ այդ որոշումը երբեք չի կայացւի, այլ կունենանք արդիականացւած կոնսերւատորիա»,- եզրակացրեց նա:*

# ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

**Այսու իմ շնորհակալութեան եւ երախտագիտութեան խօսքն եմ յայտնում՝ Ձեզ, Իսլ. խորհրդարանի 12-րդ գումարման ընտրութիւններին ինձ հովանաւորելու եւ վստահութեան քւէի կապակցութեամբ:**

**Անկնյայտ է միութիւնների ազգային եւ մշակութային դաստիարակութեան կարեւոր դերը, որն այդ համոզմունքին կառչած մնալով, ընդմիշտ ուշադրութեան կիզակէտում եմ պահել եւ աչալուրջ հետեւել եմ առկայ դժւարութիւններին ու խնդիրներին եւ հնարաւորութիւններիս ու ուժերիս ներածին չափով աշխատել եմ եւ կաշխատեմ նեցուկ հանդիսանալ, որպէսզի միասնաբար յաղթահարենք բոլոր դժւարութիւններին:**

**Անխախտ գործունէութեան եւ յաջողութեան մաղթանքներով՝**

**Հ. Մ. «Արարատ» կազմակերպութեան, Հ. Մ. «Սիփան» միութեան, Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան, Հ. Ուս. «Չհարմահալ» միութեան, Հ. Մ. «Սարդարապատ» միութեան, Հայկական հարցերի ուսումնասիրութեան կենտրոն (ՀՈՒՍԿ), Հայկական հասարակական միութեան (Հայ ակումբ), Իրանի Հայ Արհեստաւորների միութեան, Հայ Համալսարանականների Ընդհանուր միութեան, «Հայ կին» միութեան, «Հայ կին» միութեան կից «Անի» միութեան, «Հայ կին» միութեան կից «Արմենուհի» միութեան, «Հայ կին» միութեան կից «Անահիտ» միութեան, Փերիոյ Կրթասիրաց միութեան, Թեհրանի Հայ Կանանց Բարեգործական ընկերութեան, Ս. Թարգմանչաց եկեղեցու Եկեղեցասէր կանանց միութեան, Հայ Կաթողիկէ «Չիլոյեան» ծերանոցին, «Վան-Վասպուրական» պատմական հարցերի կենտրոնին, Հայ Ճարտարապետների եւ Ճարտարագէտների միութեան, Իրանահայ Ուսուցիչների միութեան, Իրանահայ Գրողների միութեան, «Գիւլիզարդ» հայրենակցական միութեան:**

**ՅԱՐԳԱՆՕՔ՝ ԱՐԱ ՇԱՀՎԵՐԴԵԱՆ**

# ԱՐԵՒԱԳԱԼԻ ԵՒ ՀՍԿՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԹԵՀՐԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ՄԵԾ ՊԱՀՈՑ ԱՌԻԹՈՎ

Եկեղեցու տօնացոյցը յիշեցնում է մեզ, որ արդէն Մեծ Պահքի սեմին ենք:

Քրիստոնէական եկեղեցու կեանքում **Մեծ Պահքը գեղեցկագոյն առիթն է, որ հաւատացեալներին մղում է աղօթքով, պահեցողութեամբ եւ եկեղեցական արարողութիւնների մասնակցութեամբ՝ վերանորոգութեան եւ հաւատքի վերակենդանացման:**

**Առ այդ Մեծ Պահոց առաջին շաբաթից՝ հինգշաբթի, 15 փետրուարի 2024-ից սկսեալ Թեհրանի մեր եկեղեցիներում կատարւելու է առաւօտները՝ Արեւագալի եւ երեկոները՝ Խաղաղական ու Հանգստեան ժամերգութիւններն ըստ հետեւեալ ժամանակացոյցի.-**

Ա- Ամէն չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին՝ Արեւագալի ժամերգութիւն՝ բոլոր եկեղեցիներում, առաւօտեան ժամը 9:00-ին, իսկ երկուշաբթիից- ուրբաթ երեկոները Խաղաղական ու Հանգստեան ժամերգութիւններ:

Բ- Ամէն երկուշաբթի օրերին՝ հերթաբար մեր բոլոր եկեղեցիներում տեղի է ունենալու Արեւագալի ժամերգութիւն առաւօտեան ժամը 9:00-ին ըստ հետեւեալ ժամանակացոյցի.-

-Երկուշաբթի, մարտի 18-ին, 2024, առաւօտեան ժամը 9:00-ին՝ **Ս. Թարգմանչաց եկեղեցի**:

Կոչ ենք ուղղում մեր սիրելի հաւատացեալ ժողովրդի զաւակներին, որ ներկայ լինեն վերոյիշեալ արարողութիւններին, որպէսզի մեր հայրերի ապաշխարողական աղօթքներով, շարականներով եւ հոգեւոր երգերով առաւել եւս զօրանան իրենց հաւատքում:

**ԴԻՒԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ**

## «ԱՄՆ-ի....

(Շար. 1-ին էջից)

*լարւածութիւնները շեղելով, Գազայում շարունակում է իր ոճրագործութիւնները, յստակեցրել է. «ՄԱԿ-ը եւ Անվտանգութեան խորհուրդը չեն կարողացել լաւապէս իրականացնել իրենց միջազգային պարտաւորութիւնները, սիոնիստական ռեժիմի պատերազմական ոճրագործութիւնների եւ ցեղասպանութեան նկատմամբ, սակայն անտարակոյս սիոնիստական ռեժիմը եւս Գազայում իր նպատակներից ոչ մէկին չի հասնելու»: Նա նաեւ դատապարտել է սիոնիստական ռեժիմի օդային յարձակումները եւ Սիրիայի տարածքային ամբողջականութեան խախտումը: Գեներալը անդրադարձել է Սիրիայում ԱՄՆ-ի ռազմական անօրինական ներկայութեանը, եւ ընդգծել է. «Սիրիայում ԱՄՆ-ի ներկայութիւնը համարւում է օկուպացիա, անօրինական, անտրամաբանական եւ բացայայտօրէն խախտում է նորմերը, միջազգային իրաւունքի հիմնական սկզբունքները եւ ՄԱԿ-ի կանոնադրութիւնը»: Իրանի պաշտպանութեան նախարարը ընդգծել է, որ Իրանի Պաշտպանութեան նախարարութիւնը հէնց այնպէս, որ ահաբեկչութեան դէմ պայքարի ժամանակաշրջանում կանգնեց Սիրիայի կողքին, այսօր եւս պատրաստակամ է իր համակ կարողականութեամբ Սիրիայի կառավարութեան կողքին զարգացնել Սիրիայի պաշտպանական ու զսպող կարողութիւնը»: Իրանի պաշտպանութեան նախարարը ընդգծել է, որ «Ալ աքսա Փոթորիկ» գործողութեան ընթացքում ԱՄՆ-ը մեծ քանակութեամբ զէնք ու զինամթերք ուղարկելով սիոնիստական ռեժիմի համար պատճառ է հանդիսացել Պաղեստինի ժողովրդի առաւել սպանութեան, եւ նշել է. «ԱՄՆ-ի եւ սիոնիստական ռեժիմի որեւէ ռազմավարական սխալ եւ արկածախնդրութիւն, տարածաշրջանում աւելի է սրելու իրավիճակը»:*

*Հանդիպման ընթացքում Սիրիայի պաշտպանութեան նախարար գեներալ Ալի Մահմուդ Աբբասը ընդգծել է. «Դիմադրութիւնը, դիմակայութիւնը, պաշտպանական կարողականութեան զարգացումը եւ երկկողմ համագործակցութիւնների ամրապնդումը, լաւագոյն ճանապարհն է թշնամիներին դիմակայելու առումով, որը պահանջում է երկու եղբայր երկրների կրկնակի համագործակցութիւնը թշնամիների դիմաց»:*

SET Coffee
فروشگاه: هفت تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰
کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار ماگنولیا، پلاک ۸۱۱۷
0936-6726563
021-88305827
www.set-coffee.com
قهوه سِت

«Օդ Դոռնա»
օդանաւային ընկերութիւն
آژانس هواپیمایی اوج درنا
با بیش از ۲۵ سال تجربه
تور و ویزای اروپا و انگلیس
صد در صد تضمینی

کل اروپا و آسیا
استرالیا
کانادا
امریکا
فروش بلیط با بهترین نرخ در مسیرهای
آدرس: خیابان مطهری، نرسیده به لارستان، پلاک ۴۵۸
تلفن: ۸۸۸ ۹۴ ۲۲۲
۸۸۹ ۲۶ ۱۱۱
۰۹۹۱ ۳۲۳ ۱۳ ۲۰
مارلنه شاهبنده
@OUJ.DORNA

املاک هنرمندان
● بزرگترین آژانس مسکن مرکز شهر تهران (منطقه ۶)
● خانه های قدیمی تخصص ماست
آدرس: میدان هفت تیر، کریمخان، خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک ۴
تلفن: ۸۸۸۴۵۵۷۷ – ۸۸۸۴۵۵۶۶
واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰
مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴
مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی

ՔԱՐԻՄԻ
Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ
خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی،
مبلمان، خرده ریز و لوازم آنتیک
Հեռ.՝ 88594063 եւ 09121193212

«Արարատ»
Ամէն տեսակ տնային իրերի գնորդ
سماور ذغالی، نقره جات، ظروف مسی،
چراغ لاله و لوستر،
رادیو لامپی، رادیوگرام مبله، صفحه گرام،
لوازم چوبی آنتیک و خرده
Հեռ.՝ 88523388

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել
«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը
(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանօք)՝ հետեւեալ հասցէով.
Հիւսիսային Սոհրեւարդի պող., Սոհեբի փողոց, համար 16
Հեռ.՝88761154
«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ